



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


սպասմանել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material









արք 47

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՐԵՍՊՈՆԵՆՏՆԱԿԱՆ ԶԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# ԼՈՒՍԱԲԵՐ

100



ԱՍՏԻՔ

5721

~ 1250

ՀՐԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՌԵՏՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# ԼՈՒՍԱՐԵՐ

ՎՅՂ. 63-81

Լ-61

Ա. Տ Ա Ր Ի

ԱՅՈՒՂԱՄԵՆ 1927 թ.

ԱՅՐԲԵՆՍՐԱՆ ԵՒ ՍՈՍՁԻՆ ԸՆԹԵՑԱՐԱՆ

Կազմեցին

ՄՏ. ԼԻՍԻՑԵԱՆ, ՅՈՂԷ. ԹՈՒՄԱՆԵԱՆ և Լ. ՇԱՆԹ

Գ ա ա Կ Ե Բ ա Ղ ա Բ Ղ Ե Յ  
Վ. ԱՄԻԿԵԱՆ



ՏԱՅՆԵԶՈՐՆԵՐՈՐԴ ՏԻՊ  
(Բարեփոխած)

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԿԱՐՄԻՐ ԱՍՏԴ» Բաղնիստեան փ. № 39.

1923



70524

ԲԵՐԵՏ

A  $\frac{\text{in}}{860}$

# Ա Յ Բ Բ Ե Ն Ա Դ Ա Ն



ա

ա ա ա



ա ա ր

ա ա ա, ա ր ա



ա ա ր

ա ա ա

ա ա ա



ա ա ա,

ա ա ա,

ա ր ա.



Կտր  
Կտրտտ  
Կտտ  
Կտտտր



տտրտտտ տտրտտտ Կտրտտտ



ԿտտտրԿ  
րր. Կրր  
ԿրրտԿր  
տտտԿր

տտտր, տրր Կտտտր  
տրր. ԿտտտրԿ. տտր տրր



սաւ, զաւր  
սաւիկ, զաւրիկ  
կաւար, կաւանկ

սաւրի զանկ զիկ կաւ  
զաւրիկ, արի զար



Տաւ

Տաւիւր

Տաւ, Տիւ, աՏիւ,

կաՏ, զաւՏ, աւրաՏ-

Տի Տաւիւր զաւ,

իՏ սաւաւիկիւ պիւրի զաւՏ



## Տարաւեր



Էս. Էսն. ւսն.

Տր ւսն արար  
կրն արկրն. արարարկրն.

Էսնսկ արար. արար Էսնրն



## ՏոՏ

Էոր. Կոր.

Կար Տր Տորի.

ԿարՏի Տորի.

Տր արկր. Կորի.





Եւս

Եւսուս

Կու. ասկու.

քուքու. ասուս.

քուքու. Կուքու.

ասու. ասուքու.



Իսկ ու Կուքու

քու. քուքու. քուքու

ի՛՛՛ Կուքուքու ասու ասուքու քուքու.

Կուքուքու ասուքուքու քուքու.

քուքու Կուքուքու, ասուքու.





ու

ուրկ. րկրկ.

լու. լուր. լաւ լուր.

լար. լոր. աւլոր.

աւորք ուրեւ արունե լուրեւ.



կրկու

կրկունե աւաւ կու-կու. կու-կու.

կարունե աւաւ Տրւոնե. Տրւոնե.

ուրկր աւաւ Տր-կր-կր-կր.



Իրկուս Բաւ  
 Իւ լաւ Բաւս ունիւ  
 ԲԿ. Բաւս քաւս  
 Տաւուկը Բաւ. Բաւ.-



Տէկ ու Կէս  
 Կէս. Կէս էլ Կաւի Տէկ.  
 Իրէկ քաւսն էր. Կիրակը էր.-



աւրի ու աւստր.  
 աւի աւստրը ԲԿԷ ԲԷ.  
 Էն աւի աւստրն Երաշտի ԲԷ.  
 Տէր աւտը Կաւսի ԲԷ:



Մարիամ քաղրիկը

Աս է Մարիամ քաղրիկը.  
էս էլ սիրուն Նորժիկը,  
սիրուն Ննմիկը, սիրուն

Մանիկը.

Նուարուրի քան ռոնուրը,  
Արամի պաղրիկ Ըամը,  
Բուկ Մարկոսը, առա Արամիկը,  
լալկան Նրան.

էս էլ էս...

Ննուկը Մանուս, էր լալ  
Խմանու.





## Միրանի Տուկ

Կար Տի Տանուկ

Նկունք. Միրան:

Միրանի Տի Տուկ զբաւաւ:

- Պապի, Տուկ, Տուկ, - աւաւ:

Միրան:

Կարգուն զուն ընկաւ ու  
Տուկ զարաւ:


- Մուկ, պապի, ի՞նչ

լաւ Տուկ կարգուն

զարաւ, - լաւ ինչ էր

Տանուկ:






## Վերիվի Նշանք

Միս, քա շունք քա քա Նշանքի  
 քա քա քա Նշանքի քա քա Նշանքի  
 քա քա քա Նշանքի քա քա Նշանքի  
 քա քա քա Նշանքի քա քա Նշանքի

Նշանք





## Միշտ

Նորիւ շողը ընկաւ քնաւորին,  
աւարի կաշաւորին.

Իւ. քրդաւ. ուշ է:

Միշտն է իր ընդ քրմակէն իւր  
քնաւորի լաւ.

Իւ. քրդաւ. ուշ է:



Նշանակեալն ու Նշանաւորն.



Նշանակեալն զո՞ւ, զո՞ւ.

Տիր Նշանաւորն աշո՞ւ, աշո՞ւ



Մի Կովր.

Մի Կովր վար է սովոր-  
ել ճրարում է արհիւր արար  
ու վրնաւում:

Մի արարար էլ զգնում է.  
Ինչպիսի զարիւ է. Կողր  
վրաւորում:



## Նրեր ուժն է

- Նրեր ժրն է. ժր քան Վրնն է-  
ասում էր Դան:

- Նրեր ժրն է. ժր քան Վրնն է-  
ասում էր Նիքոն:



## Արամիշը լեռնը

Լեռնը մէկ կոպէկ ունէր:

Քնկաւ կրքաւոր ու ասաւ.

- Երկարիւն քիչքաւ քուր:

Վրկէր քուր Երկու Տաքիւր  
քուր: Նա կոպէկ էլ. քուր քուր:

# Ենկերանէր Մարմերկը



Պուկասը Տաշը կրորդի  
էր. լալիս էր  
Մարմերկը առաւ.  
- Լաւ, լաւ. ի՞նչ լաւ:  
Պուկաս, Տաշիկը տունը  
ի՞նչ աւելցո՞ւնց կարի՞մ

Ախի ո՞վ է իկի.

|         |         |
|---------|---------|
| Եստարը, | Մաղարը: |
| Երշակը, | Եռշակը, |
| Եռիկը.  | Եռիկը:  |

# Մորթիք



Երբեմն իր փրկանքով  
շողանում էին:

Մի անգամ էլ էնպիսի էր. որախ  
որախ իսպառում էր փրկանքով:

Մէկ էլ արիւն իր իսպառ շուն  
որթիք է ուտում:

-Վա՛ն Կիրաւ Եւր որթիքիւ.  
Կիրաւ-աղաղակում էր Մի անգամ



որախ Մի անգամ որթիքիւ Մի անգամ





Դիմի Դաւիթ

- Դաւիթի Դաւիթ, ա  
Դաւիթի Դաւիթ, քիւնը  
Տիւ շուր:

- Նիշուր Նիւն, Բիւն  
աշուր - աւաւ Դաւիթ:

- Նա Տիւ շուրն ի՞նչ աւաւ՝ ո՞ր  
Կորաւ. Էւրթի Բիւն, Է:

- Կաւ Է, Կաւ Է.  
շաւակներն Կաւ Է:  
Մանու՞մ ի՞նչ Կրքորը  
Կարկաշտիւ - աւաւ  
Դաւիթ:



Դիմի Էր Դաւիթ:



## Դուր

Դուր փրկուք ուրիշ է. Տալ-  
րը աւելի պէս սուր-սուր:

Դուր շարակեր է փաշու՝  
փաշփրցում է մեծն քիչն և  
շարունակ ուրում է:

Կաշիւն շար է սիրում.



# Կաշաղակ



Դնւ ի. էր Դնւ ի.  
պարոն Կաշաղակ.  
էր Դնւ աղաղակ.

Կէր չունիւ. Դնւ ի. —

Դսկ Կաշաղակը Կանչում է Կան-  
չում. ջր-Կա. ջէ. ջէ. ջր-Կա. ջէ. ջէ.



Չիր ու չաճիչ



— Չոր իւաղողին Դնւ Բն աւում, Զաւնւ

— Զաճիչ:


— Չոր ապրիին Դնւ Բն աւում, Զաւնւ

— Չիր:

— Չիր ու չաճիչ քոյր Տիր Զաւնւին.



Արդոյն ու կապիւն



Սարսափալը մահա-

- Վիւն ալն արդոյն  
արդոյն. Տաշիւ Եւրարա. Կոքրաւիւն:

Քաւ ցարիւն մահա-

- Վիւն ալն կապիւն. կապիւն  
շարկիւն. Կոքրարա Կոքրաւիւն:



Կոքրար 5, Կոքրակ: Կարի ցար  
շուն:







ա.    ռ.    ու.    ը.    ի.    է.    օ.  
 ա,    ռ,    ու,    ը,    ի,    է,    օ

1.

|   |   |                                      |     |
|---|---|--------------------------------------|-----|
| ա | ա | աա է, ես էի, ես ասի, ուս, սուս       | Ա Ս |
| մ | մ | մոմը, իմ մոմը, միտ, ամիտ             | Մ Ս |
| ը | ը | արա մըր է, սար, սոր, արօր, օրօր      | Ր Ր |
| կ | կ | կար, կիւ, կիւսակի, եկ, կեր, կերակուր | Կ Ր |
| ն | ն | նետ, նոր, նըկար, ամանում կմր         | Ն Ն |
| խ | խ | խոտ, խիտ, խոր, խակ, սոխ, սոխակ.      | Պ Ն |
| պ | պ | պատ, պուտ, կապ, կապիկ, պընակ         | Պ Պ |
| լ | լ | նալ, կալ, սալան, ալանակ              |     |

Վ ա    ը ւ.    ի ռ.    է ւ.    օ օ

|   |   |                                     |     |
|---|---|-------------------------------------|-----|
|   | տ | Տատիկը միս տապակի,                  | Մ Տ |
|   |   | պապիկը նըստի ուտի:                  |     |
| Լ | Լ | Լինէր, Լինէր, կարմիր սալոր Լինէր,—  | Լ Լ |
|   |   | ասում էր լալիանը ու լալիս էր:       |     |
| Ղ | Ղ | Շատ, նուշ, անուշ, անուշակ,          | Շ Շ |
|   |   | մի կապ շուշան, մանուշակ:            |     |
| Պ | Պ | Ղուկաս, տըղաս, կը խաղաս,            | Պ Ղ |
|   |   | ուսումի պիտի կաղաս:                 |     |
| Ղ | Ղ | Զաւէնը մըտել է աւազան,              | Ղ Ղ |
|   |   | խաղեր է խաղում զ'անազան:            |     |
| Ղ | Ղ | Զէ, լեզու ունի, լեզու չէ            | Ղ Ղ |
|   |   | մեզ է կանչում, մեզ պէս չէ. ի՞նչ է:  |     |
| Վ | Վ | Վըտակը տես վազում է վարար,          | Վ Վ |
|   |   | վանշ-վիշ, վանշ-վիշ:                 |     |
| Ղ | Ղ | Զինջ ջըրի մէջ տկան ջներըս ու երեսըս | Ղ Ղ |
|   |   | լըւանամ, ջան, ջան:                  |     |
| Մ | Մ | Մայրիկիս պէս մայրիկ ոչ մէկը չու-    |     |
|   |   | նի Սյ իմ անուշ մայրիկըս:            |     |
| Յ | Յ | Յուրա է, էլ տերեր չը մնաց,          | Յ Յ |
|   |   | ցիրուցան եղան: Աշունը անցաւ:        |     |

Ընկերներին անունները — Սուրէն, Արամ, Մա-  
րիամ, Կարօ, Նունէ, Եւա, Պապակ, Իսակ, Խորէն, Օսան:



Տիկնիկը տկար է  
Պստիկ Աշխէնը մի կտոր  
կտաւով կապել է տիկնիկի  
վիզն ու տխուր նստել:

— Կամաց մօն արի, Մը-  
կըրտիշ, կամաց, տիկնիկս տը-  
կար է:

### Զորս ոչխար

— Շողեր, ա Շողեր, ոչխարները մտել են պար-  
տէզի վազի, կանաչ ոտները  
չուտեն



— Ի՞նչ ոչխար, նանի: Ռը-  
տեզ է:

— Աղջի, ոչինչ չես որո-

շում: Տէս, այ չորսը:

Շողերը նայեց պարտէզի կողմը ու տեսաւ, որ  
աֆտեղ չորս շապիկ էին կախել չորանալու:

## Տղան ու գոմէշը




Մի գոմէշ նստել էր ցե-  
խի մէջ: Տիգրանը ցատ-  
կեց գոմէշի ուսին ու ոտնե-  
րով զարկում էր ու զարկում:  
Մէկ էլ գոմէշը վերկացաւ ու  
մտաւ գետը. գնաց գնաց մին-  
չեւ գետի կէսը: Տիգրանը վա-  
խից զրկել էր գոմէշի վիզը

ու գոչում էր.

—Վա՛յ, մայրիկ ջան, գետը տաբա՛ւ:

Աս էլ գիրք գրել գիրքիմ: Ո՞՞  
գիրք շատ գիշերիկ է:


## Գանակ ու գզալ



—Կտրեմ, կտրեմ, գէնը ղնեմ, —ա-  
սաւ գանակը:

—Տանեմ տամ ու ետ զամ, —ասաւ  
գզալը:

Առփորիմ դասս, գնամ գնդակ  
խաղալու:



### Սաւերն ու Բաղը

Մի օտար բաղ էին բերել բակը. դէս ընկաւ,  
դէն ընկաւ, բաց դարպասով ելաւ դաշտը:

Տեսաւ մի շարան սագ լընդլընգալէն գալ ս է  
զէմը:

—Ս.-դան, տիկին սագեր,—ասաւ բաղը,—էս ձը-  
տեղից էտպէս իստակ-իստակ:

—Մեր գետակից, բլուրի տակից: Եւ ինչ գե-  
տակ, ինչպէս իստակ: Իսկ տիղմի տակ ուտելու բան  
տեսակ-տեսակ:

*Մի բաղ էին բերել բակը:*

## Պարոն գլխարկը



—Ես էլ արդէն պարոն եմ,—ասաւ Գարեգինը: Դրաւ Գասպար պապիկի լաճն գլխարկը ու գնաց զուրա:

Դէժը ելաւ Գասպար պապիկը և ասաւ.

—Պարոն գլխարկ, պարոն գլխարկ, էտ հըր ես տանում իմ պատիկին:

---

## Բ ա գ ի կ

Բադիկ, բադիկ, էտ հըր բարով.  
էտ հաս-հարմիր նոր սուերով,  
տոտիկ-տոտիկ օրօրւելով:

---

Հասպարը Գարեգինի, Պարիայի,  
Պանիէյի, Բարկէնի ու Բագրապի  
պապիկն է:



## Վառարան

Ցուրտ էր: Պառաւ կատուն պառկել էր վառարանի առջև ու մըռմըմ էր: Սառան սև աչիշները լուռ ուղղել էր կրակին ու ասում էր.

—Երնէկ շուտով կանաչէին ուռիները, խաղալին սիրուն գառնուկները, կ'ըռ կ'ըռ նորից գային կռունկները:

Եստի Բ սիրումս ամառը առումն կանաչ ուռիները քակ:

## Անկարգ Ռուբէնը

Ռ՛, ր են գուլպաներս: Ռ՛վ է տարել կ'շիկս: Ռ՛ւր է գօտիս, —ասում է Ռուբէնը ամեն առաւօտ: Ոտաբորիկ վազվզում է դէս ու դէն ու անվերջ որոնում:

Ոչանում է Ռուբէնը ամբն առաւօտը դասին.



## Աղջիկն ու կուժը

Մանուշը կուժն ուսեց ու  
 ժիր-ժիր գետակն իջաւ ջուր  
 բերելու:

Կուժը որ լցրեց, ուզեց  
 շալակի, ուժը չը պատեց:

Կուժի մօտ կանգնել մո-  
 լորւել էր:

Անցնում էր մի սլառաւ  
 կին ու ժպտաց:

—Աղջի ջան, ինչո՞ւ ես  
 մոլորւել: Կուժի կէսը դատարկի, ուժդ կը պատի:



Կուժն ու կուլան  
 նստել են կուլան:



Աղջիկը կուժը որ կիսւի՝ ուժը  
 պատի:

## Մայրիկի թիթեռնիկը



— Մայրիկ, մի թերթի թնդիթ տուր և թե՛ ու ասեղ,  
 թևեր պիտի կարեմ, թիթեռնիկ պէտք  
 է դռնամ: Արագ-արագ թևերս կը  
 շարժեմ ու կը թռչեմ դէս ու դէն  
 թեթև-թեթև:


Մի թիթ թուղթ քուր, թիթի  
 պիքի շիւխ:

## Ա յ ծ ր



Այծը ամեն առաւօտ դնում է  
 արածելու: Ենում է ժայռերի  
 ծայրը, կրծում է ծառերի տերե-  
 ները, կա՛ռչ խոտեր ու ծաղիկներ  
 և իրիկունը ծծերը լի դալիս է  
 տուն: Մայրիկը կաթը կթում է,  
 պանիր, մածուն շինում:

Այծը ծայրի ծայրին արածում է:



## Ժամկոչ ախպէր

Ժամկոչ ախպէր, ժամկոչ ախպէր,  
 ճւր կերթաւ:

Ժամի պատիկ զանգակները  
 պիտի տաս:

Շլիմ-բիմ-բիմ,

Շլիմ-բիմ-բիմ...

Ժամկոչ ախպէր, ժամկոչ ախպէր,  
 ճւր կերթաւ:

Ծանր ու մեծ կոշնակները  
 պիտի տաս:

Թոււմ-բոււմ-բոււմ,

Թոււմ-բոււմ-բոււմ...

## Գուլթան

«Թաթնոս, ասան գուլթան»:

Թաթնոսն ասաւ գուլթան:

«Նոս սեր ուտեմ, գուլթան»...

Դամկոչը պանօ է զրաւիւ:

Շլիմ-բիմ-բիմ,

Թոււմ-բոււմ-բոււմ:

Դամանակ է. Յովսիւսը, վիր կնայ:



### Գոմը ու հաւը

Գոմը մի հորթուկ ունեցաւ, հաւն էլ տան և հինգ ճուտ հանեց:

Ու հպարտ-հպարտ իրար պատահեցին:

— Բարով, կովիկ մարիկ:

— Բարով, հաւիկ մարիկ:

### Միշր. ու չաճիչ

Միշրի համը խաշիկ խաշիկ,  
 չաճի համը հաշիկ հաշիկ,  
 համը զիսան, համը զիսան,  
 անսանի զիսկը զիսան:

## Հաւերը



—Է, խնամի խորան, խնամի  
խորան:

—Հը, ի՞նչ է որ...

—Հաւերս կորան, հաւերս կո-  
րան:

—Էէ, մեր բակումն են, մեր  
բակում. չը կորան:

—Հա՛, Քշի, քշի, ետ գան. քշի, ետ գան:

—Քշշ, քշշ: Քշում եմ, քշում, ետ չեն գալիս:

—Էյ, խնամի խորան, թէ ուզես կը գան, թէ ու-  
զես՝ կը գան:



Էյ. Զմիւն-կանչում էր  
Պայկը: -Պոյ ի՞մ առիւ. քիս.  
Պաւսն ո՞ւմ իս



### Անքուն աքլորը

—Արաքսի, Մեղքոն, վեր կացէք,  
վեր կացէք, բաւական է: Աքլորը  
կանչեց երեք անգամ,—գարթե-  
ցնում է մայրիկը:

—Իհ, աքլորը, աքլորը, ինքը  
քուն չունի, սուտ-սուտ կանչում  
է,—նեղացաւ Մեղքոնը և վերմակը  
քաշեց աչքերին:

### Թանով սպաս

Մէկ, երկու, երեք—համեցէք կերէք,  
ուրբ, իննը, տասը,—թթու Թանով սպասը:


*Միորը խաղցր է շափարից:  
Բունը Միորից. շափարից:*

## Շնիկն ու փղը

Մի փիղ էին ման ածում փողոցներով: Մի փոքրիկ շուն սկսեց փղի վրայ հաջել: Մեծ գամփռը ասաւ.

—Այ, քոթոթ, ինչու ես հաչում: Դու հմ, փիղն հմ  
Շնիկը ասաւ.

—Թող աշխարհքն իմանայ՝ ինչ քաջ եմ, որ փղի դէմ կը հաչեմ:



Պառկել է փխսիկը,  
Նորփիկը քափուկ անկողնի  
Վրա ու իրափու՛՛՛ է:

Լամպն ու արեւը



Փոքրիկ լամպը վառել էին և դրել էու-  
սասուտի առջև:

Քիչ մտիկ արաւ, տեսաւ որ արեւ մայր  
է մտնում: Նայեց ու ասաւ.

—Քեռի, վատ չես լուսաւորում, բայց  
ի հարկէ իմ փայլին չես հասնի:

Քամին այս որ լսեց, ծիծաղը պրծաւ.

—Փնէ,—արաւ, ու լամպը հանգաւ:

---

Քիռի Մանուսը շաշ լաւ է-  
ֆիւսք է պաշտում: Մոֆրիկները  
ամիս իրիկունս աղաչում լին.  
-Քիռի, ֆիռի, էֆֆիւսք պաշտի:

Ծնագուկն ու ճուտիկները



Ծուտիկները ճըւճուտէին՝  
ճիւ, ճիւ, ճիւ:

—Ծիկ, ճիկ, ճիկ, ի՞նչ էք  
հաճիք,—հարցրեց մայր-ճու-  
տիկը:

—Ծի-ճու, ճի-ճու, ճըւ-

ճըւացին ճուտիկները:

Դէպքն ու Զարուք. Թոճակն  
ու Կարիճը Տիգրալ Բն:  
Ծանձն էլ: Յիճուն էլ:

Շուկայ

Հրանտը նոր հանւել էր ու պառկել:

—Ա, տղայ, էս ի՞նչ ծանր է գրպանդ: Մէջը ի՞նչ  
կայ,—հարցրեց մայրը ու գրպանը դատարկեց:

Դուրս եկան ժանդոտ գրչածայր, կրծած մատիտ,  
վէգեր, կոճակներ, օղակ, քարեր և յետոյ, այս բոլորի  
տակից Հրանտի կեղտոտ թաշկինակը:

—Ախ, դու սատանմայ, էսպէս էլ գրպան կը վնի:  
Կարգին շուկայ է, շուկայ,—ծիծաղեց մայրը:

Մայրը ծիծաղում է, իսկ տղան արդէն անուշ-  
անուշ մըշմըշում է:



### Սիրունիկ յոպոպ

—Մայրիկ, մայրիկ, տնո, տնո, յու-  
նապի ծառին այն ինչ թռչում է,  
սանրը գլխին:

Մայրիկի փոխարէն յանկարծ  
թռչունը պատասխանեց ծառից՝ «յոպ-  
յոպ, յոպ-յոպ»:

### Գաջ ձիաւորը

Ո՛վ է տեսել Գէորգի նման ձի  
նստողը: Հօր ձեռնափայտը ձեռք  
զցեց թէ չէ, հեծնում է ու ձայն  
է տալիս:

—Էհէյ, գնում եմ Գանձակ,  
ձեզ համար տանձ ու խնձոր քե-  
րեմ:



Ան չարի չփոխով ի՞նչ կարում  
ես ցրում չարիւրէ ի՞նչ:

## Բեի ունեցողների սեզանը

Յակոբին և իր եղբորը ջուկ սեզան էին նստեցնում:

— Հայրիկ, — ասաւ մի օր Յակոբը, — ինչո՞ւ մեզ էլ ձեր սեզանը չես նստեցնում:

— Յետոյ կը նստէք: Ձեր բեխերը դեռ չեն բուսել, — պատասխանեց հայրը հանաքով:

— Ձեր սեզանը կորլի՞ր, — բարկացաւ Յակոբը, — դու երկար բեխեր ունես:

---


Ձւի գողը ձիու գող կը դառնայ:

---

## Չկնորար



Չկնորար Յովսէփը չորի  
Մէջ ամբողջ գիշիրը աշ-  
խատում է: Յոգնելը  
գիշրի: Զուկ է բռնում որ  
ծախի:



### Փրֆ-փուֆ

Սօֆիկը առաջին անգամ էր երկաթուղի նստում:  
 Ճամփին շարունակ ականջ էր դնում երկաթուղու  
 հանած աղմուկին՝ «փրֆ-փուֆ, փրֆ-փուֆ»:

Տունհասնելուն պէս Սօֆիկը վազեց իր զրոջ մօտ:  
 — Գիտե՞ս, ֆլօրա, ես փրֆ-փուֆ եմ նստել:

### Տէսը

— Տէսս ուր է: ՕՖ, ո՞վ է առի  
 Տէսս. — փնտրում էր Սաֆարը:

Զուր փոխն էր փնտրում:  
 Տէսը իր գլխին էր:



## Զամբիւղը

Հօրեղբայրս գիւղից եկաւ հիւք։  
Ձեռքի զամբիւղը ցած դաւաւ և ասաւ։

— Հապա իմացէք, ի՞նչ եմ բերել  
ձեզ համար։

— Ձու, իւղ, պանիր, ալիւր, մեղր,  
— կանչեցին ժանուկները մէկը միւսի

հետից։

— Ձէ, չէ. կենդանի է։

— Վառիկ, հաւ, բադ, սագ...

— Ոչ ոչ, չորս ոտք ունի։

— Գառնուկ... հորթ... ոչխար... կով... գոմէշ...

— Խելօքներ, այս զամբիւղի մէջ, Լմաւ մտածեցէք։

Երկար-երկար ահանջներ ունի։

— Է՛շ, — պոռաց մէկը ու բռնորը ծիծաղեցին։

— Է՛հ, չիմացաք, — ասաւ հօրեղբայրը ու ծածկոցը բաց

արաւ։

Զամբիւղի մէջ կձկւել էր ձիւնի պէս սպիտակ մի փոք-  
րիկ նապաստակ։

Ի՞նչ ու բախութիւն էր։

## Քոյր ու եղբայր

Պարոյրը երկու ընկոյզ ունէր, քոյրը մի գրգռիկ:

— Պարոյր, — ասաւ քոյրը, — գիտե՞ս թէ ինչ տիրուն հէքեաթ էայ, այս գրգռի մէջ:

— Ի՞նչ, ցոյց տուր, — հարցրեց Պարոյրը խակոյն:

— Նդել է չի եղել, մի բարի տղայ է եղել, անուանը Պարոյր: Պարոյրը ունեցել է երկու ընկոյզ: Մէկն ինքն է կերել, մէկը աւել է իր քոյրիկին:

— Էտ ի՞նչ յիմար հէքեաթ է, — ասաւ Պարոյրն ու փախաւ:



## Դէպի լուսնեակը

Արուսեակը եօթը տարեկան մի աղջիկ էր: Պառկել էր իր անկողնում, նայում էր լուսնեակին և մտածում:

«Նրանի երկնք, երկար մի ելաբան լինէր իմ սենեակից մինչև լուսնեակը: Նինէի, ելնէի, հասնէի լուսնեակին, նրա շարմազ ու բարի երեսին մի համբոյր տայի, բարի գիշեր ասէի և դարձեալ ետ գայի: Արդեօք կարենի բան չէ»:

այ—այ, ծախ, ծախ

# ԱՅԲՈՒԲԵՆ


(Տառերի կարգն ու անունները)

|      |     |     |     |      |      |
|------|-----|-----|-----|------|------|
| Աա   | Բբ  | Գգ  | Դդ  | Եե   | Զզ   |
| աբ   | բե  | գի  | դա  | եչ   | զա   |
| Էէ   | Ըը  | Թթ  | Ժժ  | Իի   | Լլ   |
| է    | ըթ  | թօ  | ժէ  | իւի  | լիւն |
| Խխ   | Պո  | Կկ  | Հհ  | Ձձ   | Ղղ   |
| խէ   | օա  | կեւ | հօ  | ձա   | ղաա  |
| Ճճ   | Մմ  | Յյ  | Նն  | Շշ   | Ոո   |
| ճէ   | մեւ | յի  | նու | շա   | օօ   |
| Չչ   | Պպ  | Ջճ  | Բբ  | Սս   | Վվ   |
| չա   | պէ  | ճէ  | աա  | սէ   | վե   |
| Տտ   | Րր  | Յյ  | Իւ  | Փփ   | Բբ   |
| տիւն | րէ  | յօ  | իւն | փիւր | բէ   |
|      |     | Սօ  | Ֆֆ  |      |      |
|      |     | օ   | ֆե  |      |      |

## ՉԱՅՆԱԻՈՐՆԵՐԸ

ա, ը, օ, ո, ի, է, ե,  
ու, ոյ, իւ, եա, եօ,

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10





## Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

### 1. Լուսացաւ

Լուսացաւ,  
լուսացաւ,  
լոյսն է բարին,  
ծիտն է ծառին,  
հաւն է թառին,

Աշխատաւոր, վեր կադ բանի,  
ծոյլ տղայի քունը տանի:

### 2. Թռչնիկներ

Տառիկին շրջապատեցին թռռնիկները և աղաչեցին, որ  
թռչնիկներ շինի իրանց: Տառն էլ վեր առաւ փոքրիկներից  
մէկին, դրաւ ծնկանը, երկու ձեռք ց բռնեց և վեր ու վար  
թափ տալով՝ երգեց.

ՂճԼ—ղճԼ—ղճԼ, ա—դու—դճԼ,

Նահ—նահ—նահ, ա—դու—նահ, թը՛ռռռ...

Երեւան թաւ, զեանի վրայ փանգնեց և ծիծաղելով՝ ասաւ.  
— Թւո՛ւ է, տատիկ, ես աղուհակ չը դառնայ.

Տատիկը պատասխանեց.

— Վնաս չունի, հոգիս, դեռ փոքրիկ ծիտիկ ես, կը մեծանաս, աղուհակ կը դառնաս:

Մետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի գիրկը և ասաւ.

— Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի կաշաղակ շինես:

Տատիկը նրան էլ դրաւ ծնկներին և առաջւան պէս երգեց.

Չան—չան—չան, կան—չան—չան,

դանկ—դանկ—դանկ, կան—չան—դանկ, թը՛ռռռ...

— Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինես, — աղաչեց ամենից փոքրիկը.

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վար թոցներով՝ երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծըլւըլո՛ւ մ եմ, ճիկ, ճիկ, ճիկ,

Ոստոստոս եմ, թռչկոստոս եմ, աճիկ, աճիկ, տիկ,

Արի, թևիկ, արի փետրիկ,

Որ ես դառնամ փոքրիկ ծիտիկ,

Փոքրիկ ծիտիկ, պիծիկ, միծիկ, թը՛ռռռ...

### 3. Առաջին ձիւնը

— Վայ, մայրիկ ջան, տես,

բա՛կն ու գուռը լի

թնջքան ըսպիտակ

թիթեռ է գալի...

Թոքան շատ թիթեռ

չեմ տեսել ես դեռ:

— Չէ, իմ անուշիկ,

թիթեռներ չեն էտ.

թիթեռներն անցան

ծաղիկների հետ:

Էտ ձիւնն է գալի,

փաթիլն է ձիւնի,

որ կարծես սպիտակ

թիթեռնիկ լինի.

Հանելուկ. — Փախչում եմ ետեքս է ընկնում, ետեքս եմ քմկում փախչում է:

Շուտ ասելուկ. — Կարճ պոչ փոքր, կարճ պոչ փոքր:



#### 4. Ծտի գուլպաները

Զմեռն էր, Ծիտը կծկւել նստել էր մերկ ծառին,  
Ծրտում էին նրա բարակ տոտիկները:

Ծիւ, ծիւ, դարունը որ գայ, ինձ համար գուլպայ պիտի  
գործեմ,—ասում էր նա յօտը նստած կաշադակին:

Փարունը եկաւ, Ծիտը՝ ծիւ, ծիւ, թռչկոտում էր կանաչ  
տերեւների մէջ:

—Բա ինչո՞ւ գուլպաներ չես գործում,—հարցրեց կա-  
շադակը:

—Իհ,—պատասխանեց ծիտը,—ես ո՞վ, գուլպան ով:

#### 5. Ա ք ա դ ա դ

Աքադադը կանչում է.

Ծուղրուղո՞ւ... դու դու—դո՞ւ...

Պառաւ նանը դարթնում է...

Տա—տա—տա... պա—պա—պա...

Արլոր, ինչո՞ւ կանչեցիր,

Ինչո՞ւ նանին դարթեցրիր,

Ախ դու—դո՞ւ, ա՞յ ջու—ջո՞ւ...

Ախ նանի, ջան նանի,

Մեզ մի վեր կացո՞ւնի,

Թո՞ղ մի քիչ էլ մնա՞նք,

Քնից լաւ կշտանանք:

Արլորը շուտ է կանչում:

Արլորը չի ամաչում:

Ախ աքոր, վա՛յ աքլոր,

Դու աղւէսի վա՛յ աքլոր,

Ինչո՞ւ վաղ-վաղ կա՞նչեցիր,

Ինչո՞ւ նանին դարթեցրիր:

Ախ դու—դու, ա՞յ ջու—ջո՞ւ...

## 6. Ուշիկը

1.

Թոր անտառում մի այծ է լինում։ Ունենում է մի զեղե-  
ցիկ ուլ։ Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է ա-  
րօտ անելու։ Արածում է ու իրիկունը կուրծք լիքը տուն է  
գալի։ Տուն է գալի, դուռը զարկում ու մկրկում, կանչում։

Սևուկ ուլիկ,

սիրուն բալիկ,

ման եմ եկել սարէ սար,

կաթ եմ արել քեզ համար.

դռնակը բաց, ներս գա՛մ ես,

անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,

սիրուն բալիկ.

Ուլիկը իսկոյն վեր է թռչում, դուռը բաց անում։ Մայրը  
ծիծ է տալի նրան ու կրկին գնում արօտ։

2.

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը։ Մի իրիկուն այծից  
առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սևուկ ուլիկ,

սիրուն բալիկ,

ման եմ եկել սարէ սար,

կաթ եմ արել քեզ համար.

դռնակը բաց, ներս գա՛մ ես,

անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,

սիրուն բալիկ.

Ուլիկը լսում է լսում ու պա-  
տասխանում։ Հետ մի ես դու, չեմ  
ճանաչում։ Իմ մայրը էտպէս չի  
կանչում։ Նա քաղցր ու բարակ ձայն ունի։ Բու ձայնը կոչա  
է ու կոպիտ։ Դուռը բաց չեմ անի... Գնա... չեմ ուղում քեզ...



Ու գայլը հեռանում է, գնում.

3.

Գալիս է մայրը, դուռը ծեծում.

Սևուկ ուլիկ,

սիրուն բալիկ,

ման եմ եկել սարէ սար,

կաթն եմ արել քեզ համար.

դոնակը բաց, ներս գամ ես,

անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,

սիրուն բալիկ.

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մօրը պատմում.

—Գիտե՞ս, մայրիկ, ինչ եղաւ. Մի քիչ առաջ մինը եկաւ, դուռը դարկեց ու կանչում էր.

Սևուկ ուլիկ,

սիրուն բալիկ.

Ասում էր դուռը բաց արա. էնպէս հաստ ձայն ունէր. էնպէս վախեցայ, էնպէս վախեցայ... Դուռը բաց չարի, ասի չեմ ուզում, գնա՛ւ.

—Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ինչ լաւ է եղել, որ բաց չեա արել, —ասաւ վախեցած մայրը. —էտ դայլն է եղել, եկել է, որ քեզ սուտի. Միւս անգամ էլ որ գայ, բացչանեա. ասա՛ գնա՛, թէ չէ իմ մայրը կը գայ, քեզ կը սպանի իր սուր պոզերով:

Պատմի՛ր՝ թէ ինչպէս գայլը միւս անգամ նորից եկաւ, ուլիկը նրան ինչ պատասխանեց եւ ինչ նղաւ.

Պատմի՛ր՝ որ կենդանին ինչո՞վ է պաշտպանում:

Առա՛ծ. —Անտէր ոչխարը գայլը կուտի:





## 7. Շ ու ն ր

Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
 ահա այսպէս  
 հաշում եմ ես.  
 հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
 ու տունն այսպէս  
 պահում եմ ես.  
 Թէ զայ մեղ մօտ  
 մի հին ծանօթ,  
 ճօտն եմ վազում,  
 պոչըս շարժում,

Բայց թէ մի գող.  
 չար կամեցող  
 ուզի թաքուն  
 մտնի մեր տուն, —  
 հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
 ահա այսպէս  
 հաշում եմ ես.  
 հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ,  
 ու տունն այսպէ,  
 պահում եմ ես.

Շունը միմիայն տհն է պահպանում.

Պատմիք ձեր շան կամ ձեր հարեւանի շան մասին.

Շ ու տ ա ս ե ի ու լ ի. — Տրեխը դրել եմ շուրջ, կը թրջի՝ թող թրջի,  
 և թրջի՝ թող չը թրջի.

## 8. Ու ժ ո վ ր

Այժը գնաց սառուցի վրայ խաղաց, սալթաքեց, ընկաւ,  
 առը կոտրեց. Ասաւ՝

—Սառուցի, դու շնոր ուժով ես:

—Թանձ, ես որ ուժով լինէի, արեն ինձ չէր հալի:  
Գնաց արևի մօտ, ասաւ:

—Սրի, դու շնոր ուժով ես:

—Թանձ, ես որ ուժով լինէի, ամպը գէմս չէր առնի:  
Ասաւ:

—Ամպ, դու շնոր ուժով ես:

—Թանձ, ես որ ուժով լինէի, քամին ինձ չէր ցրէ:

Ասաւ:

—Քամի, դու շնոր ուժով ես:

—Թանձ, ես որ ուժով լինէի, պատը առջևս չէր կարի:

Ասաւ:

—Պատ, դու շնոր ուժով ես:

—Թանձ, ես որ ուժով լինէի, մուկը ինձ չէր կրծի:

Ասաւ:

—Մուկ, դու շնոր ուժով ես:

—Թանձ, ես որ ուժով լինէի, կատուն ինձ չէր բռնի:

Ասաւ:

—Կատուն, դու շնոր ուժով ես:

Կատունն պոչը շալժեց, ասաւ:

—Ուժով եմ, ուժով եմ,

ուժովներից ուժովն եմ,

ազաների մուշտակն եմ,

աթոռների շուշտակն եմ,

ամառը կտուրի վրայ,

ձմեռը թոնրի վրայ

անուշ-անուշ կը պառկեմ,

թէ փրշտ անեն՝ կը թռչեմ,

ծառի ծայրին կը նստեմ:

Եթէ կատուն էլ իրեն ուժով չը համարէր,

ի՞նչ կը պատասխանէր միւսների նման:

## 9. Կ ա տ ու

Կատուն եկաւ փիսիկ-փիսիկ,  
հազար նազով ինչպէս հարսիկ,  
դունչը սրբեց թաթիկներով,  
մազը սանրեց չանիկներով,  
կատհւ, կատհւ, Էր ես տըտում.  
Թէ մկներն են այսօր աթոռն:

## 10. Խեղօք գլուխը

Բերանն ասաւ.

— Սա ամեն ինչ կուտեմ, կը խմեմ.

Գլուխն ասաւ.

— Հ'ըմ...

Լեզուն ասաւ.

— Սա ինչ ուզենամ՝ կը խօսեմ.

Գլուխն ասաւ.

— Հ'ըմ...

Ձեռքերն ասին.

— Մենք ամեն ինչ կը շինենք, կը քանդենք.

Գլուխն ասաւ.

— Հ'ըմ...

Բերանն ու լեզուն, ձեռքերն ու ոտներն ասին զլխին.

Ինչո՞ւ ես չհ'ըմ՝ անում.

Գլուխը պատասխանեց.

— Ինչ անէ՞ք-չանէ՞ք՝ առաջ ինձ պիտի հարցնէք.

Ոտներն ու ձեռները կուչ եկան, բերանը մնաց բաց, իսկ  
լեզուն կակազելով ասաւ.

— Հա՛... ըզդորդ է ասում գրգըլուլուխը...

Պ. Ռ. Թ. — Հասկացողին մին, չը հասկացողին հազար ու մին:

## 11. Չեղքի մատները

Ճկոյթն ասաւ. — Եկէք ուտենք:

Մատներմատն ասաւ. — Ի՞նչ ուտենք:

Միջի-մատն ասաւ. — Աստուած կը տայ:

Յուցամատն ասաւ. — Թէ որ չը տայ:

Բուծ-մատն ասաւ. — Գողանանք ուտենք:

Աստուած բարկացաւ, դարկեց բուծ մատի դլխին, միւսներէն բաժանեց, քշեց ցած ու հրամայեց, որ միւսներին ծառայի:

1) Ի՞նչով է տարբերում ձեզոյ ըութը ոտի ըութ մատից:

2) Ի՞նչ կենդանիներ զիտես, որոնք ոտով ըննում են:

\* \*

Ճստիկ ճկոյթ,  
աղա մատներմատ,  
երկար լոյող յուցամատ,  
աման լիղող յուցամատ,  
մշակ բուծ:

Հանելուկ. — Մտէ շամփուր, երկաթէ խորոված:

## 12. Մկան տունը

Ուր է, Մուկիկ, քո տունը,  
«Հա, հեռու չէ իմ բունը.  
կերթաս էսպէս դու առաջ,  
յետոյ բիշ ձախ, յետոյ աջ,  
կերնես բիշ վեր,  
կիջնես ցած,  
էնտեղից էլ

բիշ անցած՝  
նորից բիշ ձախ, նորից աջ,  
բունս կը դայ քո առաջ,  
Բայց դուռս ու շէմ,  
պէտք է ասեմ,  
սաստիկ փոքր է, դրացի,  
ներս մտնելիս կրօացի»:

Մոկը ընտանի թէ՛ վայրենի կենդանի է:

### 13. Երկինքը փուլ է գալիս

1.



Լինում է չի լինում մի ծստիկ-ձուտիկ,  
էս ծստիկ-ձուտիկը մի օր ծածուկ մտնում է  
դրացու պարտեզը, որ քուջուջ անի.


Յանկարծ թփից մի վարդ է պոկում,  
ընկնում է պոչին:

Ծստիկ-ձուտիկը վախեցած դուրս է փախչում, Վազում  
է վազում, հասնում է Հաւիկ-Մարիկին:

— Վա՛յ, Հաւիկ-Մարիկ, — կանչում  
է հեռւից, — երկինքը փուլ է գալիս:

— Ա՛յ ծստիկ-ձուտիկ, էտ սրտեղից  
իմացար, — հարցնում է Հաւիկ Մա-  
րիկը:

— Օ՛, ես իմ աչքովը տեսայ, իմ  
ախանջովը լսեցի, մի կտորն էլ դեռ  
պոչիս ընկաւ:




— Դէ, արի փախչենք, — ասում  
է Հաւիկ-Մարիկը:

2.

Վազում են վազում, հասնում  
են Բաղիկ-Տատիկին:

— Վա՛յ, Բաղիկ-Տատիկ, — կան-  
չում է Հաւիկ-Մարիկը, — երկինքը  
փուլ է գալիս:

— Ա՛յ Հաւիկ-Մարիկ, էտ սրտե-  
ղից իմացար, — հարցնում է Բաղիկ-  
Տատիկը:



- Ճատիկ-Ճուտիկն է ասում,  
 — Ա՛յ, Ճատիկ-Ճուտիկ, էտ ճրտեղից իմացար,  
 — Օ՛ր, իմ աչքովը տեսայ, իմ ախանջովը լսեցի, մի կտորն  
 էլ դեռ պոչիս ընկաւ,  
 — Դէ՛, եկէք վախչենք, — ասում է Բադիկ-Տատիկը:

3.

- Վաղում են վաղում, հասնում են Սադիկ-Խաթունին,  
 — Վա՛յ, Սադիկ Խաթուն, — կանչում է  
 Բադիկ-Տատիկը, — երկինքը փռւլ է գալիս:  
 — Ա՛յ, Բադիկ-Տատիկ, էտ ճրտեղից իմա-  
 ցար, — հարցնում է Սադիկ-Խաթունը:  
 — Հաւիկ-Մարիկն է ասում,  
 — Ա՛յ, Հաւիկ, էտ ճրտեղից իմացար,  
 — Ճատիկ-Ճուտիկն է ասում,  
 — Ա՛յ, Ճատիկ-Ճուտիկ, էտ ճրտեղից  
 իմացար:


— Օ՛ր, իմ աչքովը տեսայ, իմ  
 ախանջովը լսեցի, մի կտորն էլ  
 դեռ պոչիս ընկաւ:

— Դէ՛, եկէք վախ-  
 չենք, — ասում է Սադիկ-  
 Խաթունը:

4.

Վաղում են վաղում,  
 հասնում են Հնդու-  
 Հաւին:

- Վա՛յ, Հնդու-Թնդու, — կանչում է Սադիկ-Խաթունը, —  
 երկինքը փռւլ է գալիս:  
 — Ա՛յ, Սադիկ-Խաթուն, էտ ճրտեղից իմացար, — հարցնում  
 է Հնդու-Թնդուն:  
 — Բադիկ-Տատիկն է ասում:



—Ա՛ Բազիկ-Տատիկ, էտ ճրտեղից իմացար,  
 —Հաւիկ Մարիկն է ասում:  
 —Ա՛ Հաւիկ-Մարիկ, էտ ճրտեղից է

—Ճստիկ-Ճու-

տիկն է ասում:

—Ա՛ Ճստիկ-  
 Ճուտիկ, էտ ճր-  
 տեղից իմացար:

—Օ՛, իմ աչքովը  
 տեսա, իմ ական-  
 ջովը լսեից, մի  
 կտորն էլ դեռ պս-  
 չիս ընկաւ:

—Դէ, եկէք փախ-  
 չենք,—ասում է  
 հնդու-թնդուն:

5.

Վազում են վազում,

հանսում են Աղա-Աղւէսին:

—Աղա-Աղւէս, Աղա-Աղւէս,—կանչում է Հնդու-թնդու —  
 երկինքը փռւլ է գալիս:

—Ա՛ Հնդու-թնդու, էտ ճրտեղից  
 իմացար,—հարցնում է Աղա-Աղ-  
 վէսը:

—Սաղիկ-Խաթունն է ասում:

—Ա՛ Սաղիկ-Խաթուն, էտ ճր-  
 տեղից իմացար:

—Բազիկ-Տատիկն է ասում:

—Ա՛ Բազիկ-Տատիկ, էտ ճրտե-  
 ղից իմացար:

—Հաւիկ-Մարիկն է ասում:



—Ա՛ Հաւիկ-Մարիկ, էտ հրտեղից իմացար:

—Ճստիկ-Ճուտիկն է ասում:

—Ա՛ Ճստիկ Ճուտիկ, էտ հրտեղից իմացար:

—Օ՛, իմ աչքով տեսայ, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկաւ:

—Էտ լիւշ էք ասում, — ասում է Աղա-Աղւեսը, — եկէք ձեզ տանեմ իմ տունը, որ երկինքը ձեր գլխին փռււ չը գայ:

Ճստիկ-Ճուտիկը, Հաւիկ-Մարիկը, Բադիկ-Տատիկը, Սա-  
գիկ-Խաթունը, Հնգու-Թնգուն — բոլորը միասին ընկնում են  
Աղա-Աղւեսի ետեից և մտնում են նրա որջը:

Մտնում են նրա որջը ու էն մտելն էր որ մտան, մին-  
չև էսօր էլ դեռ չեն դուրս եկել:

1) Երկինքը ո՞ւ փող շէր գալիս. ապա ինչո՞ւ էին քղքոջ փակում:

2) Երկինքը իսկապէս հրտեղ փող նկաւ նրանց գլխին:

Պատմիր՝ եթէ Հնգու-Թնգուն փակած լինէր Աղա-Աղւեսի որջից,  
Քնչպէս կը պատմէր:

Ա. ա. ծ. — Իշի գերեզմանը գայլի փորն է:

## 14. Բադիկը

Բադիկ, բադիկ,

կարմիր թաթիկ,

ո՞ր ես գնում կամաց-կամաց,

ձագուկներդ չորս կողմդ առած,

— Նս գնում եմ ջուր գտնելու,

ձագուկներս լըւանալու,

ձագուկներս մաքուր-մաքուր,

տղոց երեսն աղա է ու մաւր:



## 15. Արեւ ու Լուսին

Լուսմէրիկը իր աղջկան ու աղին ուղարկեց, որ երթով հսկեն աշխարհըն, մինը՝ ցերեկը, միւսը՝ գիշերը։ Աղջկայ անունը Արեւ էր, աղինը՝ Լուսին։

— Քուրիկ, ես ցերեկը կերթամ, իսկ դու գիշերը, հա՛, — ասաւ չարահճի Լուսինը։

— Ձէ, ես աղջիկ եմ, ես գիշերը կը վախենամ, — հակառակեց սիրուն Արեւը։

Եւ քոյր ու եղբայր կուեցին ու կրկին եկան իրենց մօր մօտ։

Մայրը խմոր էր հունցում։ Ասաւ.

Դու գիշերը գնա՛, Լուսնիկ ջան, Արեգն աղջիկ է, նա կը վախենայ։

— Ձէ, ի՞նչ անեմ՝ կը վախենայ, — յամառեց Լուսինը ու շրթունքներու տեղերեց, կանգնեց։

Լուսմէրիկը բարկացաւ, ձեռքերը խմորից հանեց ու մի սպտակ աւաւ իր կամակօր աղին։ Լուսինը խռովեց, խմորոտ երեսով գուրս եկաւ ու գնաց իր ճամփան։

— Դէհ, դու էլ գնա ցերեկը շրջի, — դարձաւ մայրը սիրուն Արեւին։

— Ցերեկն էլ ամաչում եմ, մայրիկ, ամենքը իմ երեսին են նայում, — ասաւ Արեւը. որ կարմրած կանգնել էր մօր կողքին։

Այն ժամանակ Լուսմէրիկը մի բռունտ ասեղ աւաւ նրան։

— Առ այս ասեղները. ով երեսիդ նայի,  
աչքերը ծակի:

Այն օրուանից Լուսինը դուրս է գալի գի-  
շերները խմորոտ երեսով, իսկ Արևը շրջում  
է ցեղեկը ու չի թողնում երեսին նայեն.  
նայողի աչքերը ծակում է մօր տւած ասեղ-  
ներով:

1) Արևը իղջիցն է վախենում եւ ին՛քց էր  
ամաշում:

2) Խնշպէս ենք ասում այն երեսիային, որ  
ամեն յիմար ըանից վախենում է. Խնշպէս ենք  
ասում այն երեսիային, որ ամեն ըանից ամաշում է:

Առած — Ասողին էլ լսող պիտի:

Հանելուկներ. — 1) Աչիկներ, աչիկներ,  
Ոսկի, արծաթ աչիկներ,  
ցերեկները քնում են,  
գիշերները գարթում են:


2) Սև արարը բեխն ոլորեց,  
հազար հազար մարդ գլորեց:

3) Էստեղ պուպուզ, Էստեղ պուպուզ եր-  
գիկից գուրս:

### Ա Ս Ե Լ ՈՒ Կ

Ա, Է, արհ, Էկ, Էկ,  
գիգի-բարին վէր Էկ.  
մեր ոչխարին մա՛նկ արա,  
որ գայլը գո՛յ՝ իմաց արա





## 16. Ի ր ի կ ու ն

Արեւը շատ էր յոգնել, ման էր եկել ամբողջ օրը:

«Հերիք է, ասաւ,

Գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերեւը ուրախ սրւտըւում էր, որ կանգ առաւ.

«Էս ի՞նչ է, ասաւ,

արեւն էլ չի երևում,

ես էլ պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը երգում էր ծառի վրայ, յանկարծ լռեց.

«Էս ի՞նչ է, ասաւ,

ոչ տերեւ է սրւտըւում,

ոչ արեւն է երևում,

ես էլ գնամ ու քնեմ»:

Նապաստակը հստոստում էր թփերի տակ, որ ականջը սրեց:

«Էս ի՞նչ է, ասաւ,

ոչ թռչնակ է ծրլւելում,

ոչ տերեւ է սրւտըւում,

ոչ արեւն է երևում,

ես էլ գնամ ու քնեմ»:

Որսկանը անտառում որս էր անում, կանգնեց.

«Էս ի՞նչ չ, ասաւ,

ոչ նապաստակ է վազ տալի,

ոչ տերեւ է սրւտըւում,

ոչ արեւն է երևում,

Ես էլ գնամ ու քնեմ:  
 Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսաւ.  
 «Ի՞նչ լաւ է, ասաւ,  
 ո՛չ որսորդ է ման գալի,  
 ո՛չ նապաստակ վազ տալի,  
 ո՛չ թռչնակ է ծըլւելում,  
 ո՛չ տերև է սրւսըւում,  
 ո՛չ արևն է երևում.  
 մենակ ես եմ, որ անքուն  
 քէֆ եմ անում երկնքում»

Ի՞նչ կասէր լուսարացին լուսինը, արեւը, տերեւը, թռչնակը, նապաստակը, որսորդը:

Ա Ս Ե Լ Ո Ի Կ

Ամենն իր տուն,  
 լազլազն իր բուն,  
 մուկն ու կատուն  
 ձեր պապոնց տուն:

## 17. Պետիկի վերջակէտը



Մի իրիկուն Պետիկը նստեց  
 դասը սերտելու:

Մէկ էլ մայրը նկատեց, որ  
 գլուխը դրել է սեղանին ու  
 ննջում է:

— Պետիկ ջան, ինչո՞ւ

դասը չես սովորում, հարցրեց մայրը:

— Վերջակէտի եմ հասել. մայրիկ, — պատասխանեց  
 Պետիկը. — Ուսուցիչն ասաւ՝ երբ վերջակէտի հասնես,  
 հանդուստցիր:

Բով (°), ստորակէտ (·), միջակէտ (·) եւ վերջակէտ (·) — այս նշան-  
 ներից որն է ամենից շատ էա՞նդ առնել պահանջում, եւ ո՞րը ամենից քիչ:

# 18. Իս են ե...



1.

Էս էն տունն է, որ շինել է  
վարպետ Օհանը.

2.

Էս էն ցորենն է որ պահած է  
էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը.

3.

Էս էն մուկն է, որ կ'ընել է  
էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը.



4.

Էս էն կատունն է, որ բռնել է  
էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը.



5.

Էս էն շունն է, որ զըզել է  
էն կատին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կ'ընել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը.





էս էն կովն է՝ կեռ պողաւոր,  
որ հարու է աւել էն շանը,  
որ զրդել է էն կառւին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը.

7.



էս էն աղջկն է, որ կթել է  
էն կովը,  
որ հարու է աւել էն շանը,  
որ զրդել է էն կառւին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը.

8.

էս էն աղան է, որ ուզել է  
էն աղջկանը,  
որ կթել է էն կովը  
որ հարու է աւել էն շանը,  
որ զրդել է էն կառւին,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը.





9.

էս էն տէրտէրն է, որ պսակել է  
էն աղին,  
որ ուզել է էն աղջկանը,  
որ կթել է էն կովը,  
որ հարու է տւել էն շանը,  
որ զըզել է էն կատարն,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

10.

էս էն արլորն է, որ զարթեցրել է  
էն տէրտէրին,



որ պսակել է էն աղին,  
որ ուզել է էն աղջկանը,  
որ կթել է էն կովը,  
որ հարու է տւել էն շանը,  
որ զըզել է էն կատարն,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:

11.

էս էլ էն վարպետ Օհանը,  
որ մարթել է էն աղլորին,  
որ զարթեցրել է էն տէրտէրին,  
որ պսակել է էն աղին,  
որ ուզել է էն աղջկանը,  
որ կթել է էն կովը,  
որ հարու է տւել էն շանը,  
որ զըզել է էն կատարն,  
որ բռնել է էն մկանը,  
որ կերել է էն ցորենը,  
որ պահած է էն տանը,  
որ շինել է վարպետ Օհանը:



Արտագործի վերջին կտորը այս ձևով. «Վարպետ Օհանը մարթել է արլորին, արլորը զարթեցրել է տէրտէրին...»: Ետունակիր:



## 19. Հեքիաբասեր երեսեր

### 1.

Ձեռն էր, գիշերը երկար, Գիւլնազ տառը զուխը բարձի վրայ դրած՝ ննջում էր: Երեսերը վրայ թափեցին, քունը փակցին, որ իրանց համար մի հեքիաթ աւի: Նա էլ սկսեց.

— Եղել է չի եղել՝ մի արտուտիկ. կտուցը սուր՝ մեր Սուրիկի քթի նման. բրձրուլը խոճում՝ Արմիկի մազերի նման. թիկերը փափրիկ՝ Արփիկի կոնքերի նման, ոհա աշտպէս սիրուն էր արտուտիկը:

— Բա ինձ նման ոչինչ չունէր, — ասաւ Վանին:

— Բա ի՞նձ, — ձայն տըւաւ Հսիփիկը:

— Ինձ էլ չասեցիր, տատիկ, — լայ եղաւ Նազիկը:

— Սպասեցէք, սպասեցէք, երեսեր, դեռ չեմ վերջացրել, ամենքիդ էլ բաժին կը հաճի, — ասաւ տատիկը և շարունակեց.

— Աչիկներն աշտպէս նայելու էին, ինչպէս Վանիի աչքերը:

— Գառարն այնպէս կարմիր էր, ինչպէս Հռիփսիկի թշերը:

— Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս Նազիկի մատները:

— Ես ոտները չեմ ուզում, — գտնատուեց Նազիկը:

— Բա ի՞նչը կուզես, Նազիկ. Նթէ քառիկներն ասեմ, կուզե՞ս, — ասում է տատիկը:

— Ձեմ ուզում, ոչ ոտները կուզեմ, ոչ տատիկները. ես աչիկներ եմ ուզում:

— Աչիկներն ինձ է տուել տատիկը, քեզ չեմ տալ, — գոչեց Վանին:

— Նազիկ, կուսե՞ս, կատարը դու վեր առ, տատիկները ես ցը վերցնեմ, — ասում Հռիփսիկը:

— Ձեմ ուզում, ես աչիկներն եմ ուզում, — պնդեց Նազիկը:

— Վանի, դու կատարը վերցնու՛ ես տատիկները, իսկ Նազիկը՝ աչիկները, — ննդրեց Հռիփսիկը, որ ամեն կերպ աշխատում էր հաշտութիւն ձգել:

— Ի՛նչ եմ ասում կատարը, տատիկն ում ինչ որ տուել է, այն է նրանը, — պնդեց Վանին:

— Այնպիսի է ասում Վանին, — ամեն կողմից գոչեցին երեխէրը:

Նազիկը գո՛չը մնաց և վէճը երկար շարունակեց. բայց տատիկը չէր լսում. Նազիկը դրիւ էր բառին և քննյ. էլ չէին կարող զարթոցնել, վեր կ'ոցան իրանք էլ մտան տեղները:

## Զ.

Միւս իսկիւն երեւելով է ի հաւաքեցին տատիկի մօտ, որ լսեն հէքեթի շարունակութիւնը: Նա էլ սկսեց.

— Անցած զարնանը մեր պարտէզի ծառի վրայ մի սիրուն

կրկու կար: Ես նստած էի ծառի տակին, և դուք մէկ-մէկ  
եկարք ինձ մօտ:

Երբ որ Սուրբիկը ներս մտաւ, կրկուն կանչեց—*Գնւ-կնւ:*

Եկաւ Արմիկը, կանչեց.—*Պնւ-պնւ:*

Եկաւ Արփիկը, կանչեց.—*Տնւ-տնւ:*

Եկաւ Հոյփիկը, կանչեց.—*Գնւ-գնւ:*

Եկաւ Վանին, ասեց.—*Բնւ-բնւ:*

Եկաւ Նաղիկը, կրկուն էլ չլինչ չաւաւ, թռաւ, գնաց:

—Օ՛խ, ճի, Նաղիկ, ճի, ճի, կրկուն քեզ համար ոչինչ չի  
ասել...—միաբերան զո, ելին երկ խէբը և բաւկաւրին Նաղիկին:

Նաղիկը շատ նեղացաւ, թէ ինչու կրկուն իր համար ոչինչ  
չի ասել, և սկսեց լաց լինել:

Տատիկն ասաւ.

—Նաղիկ, դիտե՛ս ինչու կլկուն քեզ համար բան չասաւ:  
Նա վախեց քեզանից, ինչ որ ասելը, դու չը պիտի հաւանէիր,  
ուրիշն էլ իրանը քեզ չէր ասէ, ինչպէս անցած իրիկուն:

—Տատիկ ջան, տատիկ, որ մէկ էլ կրկուն գայ, ասա՛ ինձ  
համար էլ մի լա՛ն ասի: Ինչ էլ որ ասի, ես կընդունեմ,—ա-  
զաչեց Նաղիկը:

Տատիկը ինչպէ՛ս կատեր, եթէ եղած լինէր ոչ թէ արտասիկ, այլ  
աղունակ, կամ ծառի վրա նստած լինէր ոչ թէ կեկուն, այլ մի մոծողակ:



## 20. Ծուկն ու նապաստակը

Նապաստակը վազում էր, շունն էլ ետևից, և այնպէս  
արագ էր վազում, որ շունը չէր կարողանում հասնի:

—Էյ, բարեկամ, էտ փոքրիկը քեզանից լաւ է վազում,—  
ասաւ շան տէրը:

—Ի հարկէ, պատասխանեց շունը,—ես վազում եմ իմ  
փորի համար, նա վազում է իր կեանքի համար:

## 21. Ծոյ աղչիկը

Բանն Բնչ կանեմ կեդտոտ է,  
բամբակը կորիզոտ է,  
մետաքս պիտի, որ մանեմ,  
մաստակ պիտի, որ ծամեմ,  
կտերը տիտիկ անեմ,  
անցնողին մտիկ անեմ,  
ուտեմ, խմեմ,  
մթնի քնեմ.

Հանելուկ. — Հինգ ախպէր են, չորս պատ են շարում, մէկը  
քար է կրում:



## 22. Ծոյ տղան

Ջան, ջան, կիրակի,  
վայ, երկուշաբթի,  
նանի ջան, նանի,  
փոքս ցաւում է,  
չեմ գնայ դպրոց:

Ի՞նչ կասէր աշխատասէր տղան. ի՞նչ կասէր աշխատասէր աղջիկը.  
Առած. — Գժի համար ամեն օր Ջատիկ է:

## 23. Առաւօտ



Արեգակը դուրս է եկել, պըսպըղալով,  
շողը երբեք ներս է ընկել շողշողալով,  
ծիաը ծառին թռչկոտում է ծըւըւլալով,  
ձորում առուն ցած է հոսում վըշվշալով,  
ծոյլ տղայի բունն է տաբել խըւմփալով,  
ալըրեխները շունն է տաբել մըումըւալով:



## 24. Չալ հաւի պատմութիւնը

1.

Չալ հաւը քուշուշ էր անուամբ: Մէկ էլ գլուխը վեր բաշեց ու կանչեց.

— Հատիկ եմ դոնի, ցորենի հատիկ: Ո՛վ կը ցանի:

— Չէ, — ասաւ կատուն:

— Չէ, — ասաւ բաղը:

— Չէ, — ասաւ խոր:

— Լաւ, ես կը ցանեմ, — ասաւ հաւը: Եւ ցորենը ցանեց: Ցորենը բուսաւ, մեծացաւ, հասկը լցւեց ու գլուխը կախեց:

2.

Եկաւ հնձելու ժամանակը:

— Հասկը կախել է գլուխը: Ո՛վ կը հնձի, — կանչեց չալ հաւը:

— Չէ, — ասաւ կատուն:

— Չէ, — ասաւ բաղը:

— Չէ, — ասաւ խոր:

— Լաւ, ես կը հնձեմ, — ասաւ չալ հաւն ու ցորենը հնձեց:

3.

Եկաւ աղալու ժամանակը:

— Էս ցորենը ո՞վ կաղայ, — կանչեց չալ հաւը:

— Չէ, — ասաւ կատուն:

— Չէ, — ասաւ բաղը:

— Չէ, — ասաւ խոր:

— Լաւ, ես կաղամ, — ասաւ չալ հաւը:

Ցորենը տարաւ չաղաց ու աղաց:



4.

Եկաւ հունձելու ժամանակը:  
 — Էս ալիւրը հիկ կը հունցի, —  
 կանչեց չալ հաւը:  
 — Չէ, — ասաւ կատուն:  
 — Չէ, — ասաւ բաղը:  
 — Չէ, — ասաւ խոզը:  
 — Լաւ, ես կը հունցեմ, —  
 ասաւ չալ հաւը ու ջուր ածաւ,  
 խմորը հունցեց:



5.

Եկաւ թխելու ժամանակը:  
 — Էս խմորը հիկ կը թխի, —  
 կանչեց չալ հաւը:  
 — Չէ, — ասաւ կատուն:  
 — Չէ, — ասաւ բաղը:  
 — Չէ, — ասաւ խոզը:  
 — Լաւ, ես կը թխեմ, — ասաւ  
 չալ հաւը, խմորը գնդեց ու գլու  
 փուռը:



6.

Եկաւ ուտելու ժամանակը:  
 — Էս թաժա հացը հիկ կուտի, —  
 կանչեց չալ հաւը:  
 — Ե՛ս, — ասաւ կատուն:  
 — Ե՛ս, — ասաւ բաղը:  
 — Ե՛ս, — ասաւ խոզը:  
 — Չէ, ես կուտեմ, — ասաւ չալ հաւը ու կերաւ:



Յորենեց ուրիշ ինչ են շինում:

Պատմի՛ր. — Ինչպէս է ստացում հացը:

Ա. Ուտ. — Բան դըին՝ փախաւ, հաց դըին՝ հասաւ:



## 25. Փիսիկի զանգատը

Փիսիկը նստել  
մի մութ անկիւնում,  
ունքերը կիտել  
ու լաց է լինում:  
Մօտիկ է դալիս  
մի ուրիշ կատու:  
— Ի՞նչի՞ւ ես լալիս,  
այ փիսիկ ջան, դու...  
— Ի՞նչ անեմ հապա,  
որ լաց չը լինեմ...  
զանգատ է անում  
փիսուն արթնաղէ՛մ —  
էն Համօն թաքուն  
մածու՛նը կերաւ,  
զընաց տաաի մօտ  
ինձ վրա դրաւ:  
Հիմի տատիկի

փէշերից բնկած,  
ինձ են ման դալի  
մի-մի փէտ առած  
բութ Սուրէնը,  
Անօն ու Մօօն:  
«Մէր է, ասում են,  
մէր է գող Փիսուն:  
ախ, թէ մի գտանք,  
մածուն ցոյց կը տանք...»:  
Կապէս բան սարքեց  
էն Համօն իմ դէմ:  
Ի՞նչ անեմ հապա,  
որ լաց չը լինեմ...  
Ու Փիսուն նրստել  
մի մութ անկիւնում,  
ունքերը կիտել  
ու լաց է լինում:

Պատմիք նոյն բանը, միայն այն կարգով, որ պատահել է:

## 26. Գարնան ամիսներ

Մարտը տալիս է ձնծաղիկ,  
ապրիլը կապոյտ մանուշակ,  
մայիսին բացւում է վարդը,  
սոխակը երգում անուշակ:

## 27. Արագիլի դարձը

— Մի զով առաւօտ էր, երբ  
արագիլը իջաւ գիւղի վրա իր  
հին բունը, նրեխաները բա-  
կում խաղում էին:

— Բարո՜վ, երեխէք, — ձայն  
տւաւ արագիլը իր բարդու  
ծայրից:

— Արագիլն եկել է, արագի-  
լը եկել է, — ուրախացան երե-  
խաները:

— Նորի՜նչ կայ մեր գիւղում:

— Է՛, ինչ որ դու գնացել ես, այնքան բան է պատահել, —  
պատասխանեց մանուկներից մէկը: — Այնպէս ցուրտ էր, այն-  
պէս ձմեռ: Դու գլուխդ լաւ պոծացրիր:

— Ափսոս այստեղ չէիր, քրոջս մարդու տւինք, — շտապով  
յայտնեց միւսը: — Հարսանիք արինք, քէֆ արինք:

— Իսկ ինձ համար հայրիկս Նոր-Տարուն կրունկով կո-  
շիկներ առաւ, — ցոյց տւաւ իր կօշիկները մէկ ուրիշը:

— Իսկ ես արդէն գալոց եմ գնում, — սկսեց մի փոքրիկ աղջիկ:  
Արդէն ազատ կարգում եմ:

Արագիլը բարդու ծայրից գլուխը ծանր-ծանր ժաժ տւաւ:

— Լաւ, լաւ, շատ լաւ ես անում:



Դու ինչ նորութիւն կը յայտնէիր արագիլին:



## 28. Կոռնկներ

ԿՐ՛Ո, ԿՐ՛Ո, ԿՐՈՒՈՒՆ,  
 ԿՈՒՆԿՆԵՐՐ ԿՈՒ ԹՈՒՆ.  
 ԿՈՒՆԿՆԵՐԻ ԹՆԻ ՄԱԿ  
 ԵԿԱԼ զՎՐՈՒՆ ՄԵՐ զՈՒՆ:

## 29. Հ ո ռ ի ն

ՀՈՒՐԻՆ զՆԱՅ ՔԱՆՉԱՐԻ,  
 ՔԱՆՉԱՐ ՀԵՂԱԼ՝ ԽՈՒՄ ԵՂԱԼ,  
 ԽՈՒՄԻ ՄԱԿԻՆ ԺԻՄ ԵՂԱԼ,  
 ԺՐԱՐԱՅԻՆ զՈՒՐՈՒ ԹՈՒՄ:  
 ԾԻՐՈՐ ԹՈՒՄ ԳԵՐԱՆԻՆ,  
 ԿԱՆԱՅ ԽՈՒՄՐ ԲԵՐԱՆԻՆ

Ա. Ո. Մ. Ժ. — Անճաբը կերաւ քանջարը:

## 30. Քեռիկն մերեւ է



ԳՈՐԱՐ զՈՐՈՒՄԻՆ ԿԱՆՀՈՒՄ Է.  
 — ՔԵՌԻՆ ՄԵՌԵՎ Է, ՔԵՌԻՆ ՄԵՌԵՎ Է,  
 ԵՐՐ, ԵՐՐ, ԵՐՐ:  
 — ՄԷ- ԿԷ-ԿԷԼ ՕՐՐ, ՄԷ-ԿԷ ԿԷԼ ՕՐՐ:  
 — ՂՈՐԹ, ՂՈՐԹ, ՂՈՐԹ:

## 31. Ժամացոյցը



— Զը՛խկ-չը՛խկ չը՛խկ-չը՛խկ, — հանդարտ ու միակերպ գնում է գալիս է ժամացոյցի ճօճանիը:

— Վեր կաց, վեր կաց, Գուրգէն, արդէն եօթը խըփել է, — գարթնեցնում է մայրիկը:

— Թո՛ղ մի քիչ էլ քնեմ, — խնդրում է տղան ձեռք-ձգւելով: — Մեր ժամացոյցը առաջ է վազում:

— Ո՛չ-ո՛չ, ո՛չ-ո՛չ, — պատասխանում է ժամացոյցը պատից:

### 2.

Գուրգէնը գալիս է գարրոցից, վարարկուն հանում է, դուխարկը դէն շարտում:

— Ե-կմր, — ե-կմր, — ողջունում է նրան ժամացոյցը:

— Ու՛թ, դեռ մէկը չը կայ, իսկ հայրիկը միշտ երկուսին է գալիս:

Ու Գուրգէնը կանգնում է ժամացոյցի առջեւ, ոտը դետնին է զարկում ու կանչում:

— Ի՛նչ դանդաղ ես բանում, ժամացոյց: Մի քիչ շուտ,

— Ես-չէ, ես-չէ, — ծաղրում է նրան ժամացոյցը՝ իր երկար ճօճանակը հանդիստ աջ ու ձախ շարժելով:

### 3.

Թէյը վաղուց հաւաքել են: Գուրսը վաղուց մթնել է:

Գուրգէնը նոր նստել է զասերը սերտելու:

Իսկ ժամացոյցը ահագին աչքը չոնել նայում է ու կրկնում:

— Ա՛յ-մայ, այ-մայ:

Ժամացոյցը կրք է քնում:

Առ ա ծ. — Այսօրւան գործը վաղւան մի թոգիս:

Հա ն ե լ ո կ. — Յերեկը տիկին, դիւրն ազախին:



Մի ծառ,  
Դաշտում մի ծառ:  
Դաշտում մի կանաչ ծած:

Մի բուն:  
Ծառի վրա մի բուն:  
Դաշտում ծառի վրա մի բուն:



Չորս ձու:  
Չորս կապտաւուն ձու:  
Բնի մէջ չորս կապտաւուն ձու:  
Դաշտում ծառի վրա էն բնի մէջ չորս  
կապտաւուն ձու:

Մի թռչուն:  
Մի մարիկ թռչուն:



Չորս կապտաւուն ձւի վրա մի մարիկ թռ-  
չուն:  
Դաշտում կանաչ ծառի վրա էն բնի մէջ թռւիս է նստել մի  
մարիկ թռչուն:



Ճուտիկներ:  
Փոքրիկ ճուտիկներ:  
էն բնի մէջ չորս ճուտիկներ:  
Դաշտում կանաչ ծառի վրա էն բնի մէջ  
ծրւծրւում են չորս փոքրիկ ճուտիկներ:

Թռի, մարիկ, թռի,  
Փոքրիկները ուտել են ուզում:



### 33. Մեղու

Ահա ծագեց արեգակը,  
 ահա ծաղկեց մանուշակը,  
 մեղուն թռչեց իր փեթակը  
 տըզտըզալով, տըզտըզալով:  
 Մեղուն թռաւ ծաղիկներին,  
 մեղրը բերաւ փոքրիկներին,  
 կըճ ու խայթոցն էլ չարերին,  
 կըսկծալով, կըսկծալով,



### 34. Ո՞վ է մեղաւորը

Սարդը կախ էր արել իր բարակ  
 թելը ծառի ճիւղից ու վայր իջել:  
 Ճուտիկը, Մուտիկը և Ճիւղատու-  
 րիկը, Չալ հաւիկի գլխ վառիկնե-  
 րը, նրան տեսան:

— Ի՞նչ է, — ճաչ ճուտիկը:

— Չէ, — իմն է, — ճչաց Մուտիկը:

— Չէ, իմն է, իմը, — ճըկճըկաց  
 Ճիւղատուրիկը:

Ու երեքն էլ վաղեցին, որ սար-  
 ցը, բռնեն ու ուտեն:

Ճուտիկը վազեց՝ անփետուր թևերը տափ տալով,  
 Մուտիկը վազեց՝ բարակ վիզը ձիգ տալով:  
 Ճիւղատուրիկը վաղեց՝ իր կողիկի օտը քաշ տալով:  
 — Հոռացէք, իմն է, — վրա պրծաւ Ճուտիկը:  
 — Կորէք իմն է, — հրեց Մուտիկը:  
 — Ձեզ ով է տալիս, — բռնեց Ճիւղատուրիկը:

Իրար այնքան բռնեցին, հրեցին, որ սարդը չը սպասեց  
ու իր թելովը վեր փախաւ:

Վեր փախաւ ու վերեւից նայում էր, թէ ինչպէս էին կըռ-  
ւում փոքրիկները ու իրար կտցահարում:

— Հիմի էս ի՞նչ արիք, — ճշում էր Ճռտիկը:

— Դուք վախեցրիք, — ծւում էր Մուտիկը:

— Իմ սարդը ինչո՞ւ փախցրիք, — լաց էր լինում Ճիւղտու-  
րիկը:

Պատմիր՝ սարդը ինչպէս կը սպամէր նոյնը քանը:

Սաածներ. — 1) Ծները իրար հետ կուեցին ճամփորդի բանը աջողեց

2) Հաւը երազում կուտ կը տեսնի:

### 35. Ծիտիկի օրօրքը



Կախւած է ճիւղքից

ճօճը ծիտիկի.

փրչի, հոմիկ, փրչի,

ճօճն օրօրւի, տա ի

բերի.

նանի, ծիտիկ, նանի:

Ծիտիկը անուշ երազ է տեսնում.

փրչի, հոմիկ, փրչի,

ճօճն օրօրւի, տանի բերի.

նանի, ծիտիկ, նանի:

Բայց տես, ծիտիկը քրնից չը զարթնի.

կամաց փրչի, կամաց.

ճօճն էլ զգոյշ տանի բերի

նանի, ծիտիկ, նանի:

## 36. Ծիտը

1.

Լինում է չի լինում մի ծիտ:

Ծի անգամ էս ծտի ոտը փուշ է մանում, Դէս է թռչում, դէն է թռչում, տեսնում է՝ մի պառաւ փէտի է ման գալի, ուզում է թոնիր վառի, հաց թխի: Գնում է ասում:

—Նանի ջան, նանի, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ շուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Պառաւը փուշը հանում է, թոնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի թէ՛ իմ փուշը ետ տուր ինձ:

Պառաւն ասում է.—Փուշը թոնրն եմ գցել:

Ծիտը կանգնում է թէ՛

—Իմ փուշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ, լօշիկդ տանեմ, դուրս թռչեմ:

Պառաւը մի լօշ է տալիս: Ծիտը լօշն առնում է թռչում:

2.

Գնում է տեսնում, մի հովիւ անհաց կաթն է ուտում: Ասում է.

—Հովիւ անպէր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Այ, լօշը ան, կաթնի մէջ բրդի, կեր. ես էլ գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի թէ՛ լօշս տուր:

Հովիւն ասում է.—Կերայ:

—Ձէ, ասում է, իմ լօշը տուր, թէ չէ դէս թռչեմ, դէն թռչեմ զառնիկդ տանեմ, դուրս թռչեմ:

Հովիւը ճարտատաճ վի դառն է տալիս: Առնում է թռչում:

3.

Գնում է տեսնում մի տեղ հարսանիք են անում, մայրուշուկն ուր մոլթեն:

Ասում է.—Ի՞նչ էք մոլթել: Այ, իմ գառն առէք, մորթեցէք, բէֆ արէք: Ես է գնամ քուշուշ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ դալի թէ՛ իմ դառը աւէք:

Ասում են.—Մորթել ենք, կերել, ճրտեղից տանք:

Սա կանգնում է թէ՛ չէ, իմ դառը տալիս էք աւէք, թէ՛ չէ՝ դէս թռչեմ, դէն թռչեմ, հարսին առնեմ, գուրս թռչեմ:

Ու հարսին առնում է թռչում:

4.

Գնում է գնում, գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է:

Ասում է.—Աշուղ արագեր, առ էս հարսին, պահի քեզ մօտ: Ես էլ գնամ բուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ դալի, աշուղի առաջը կտրում թէ՛ իմ հարսն ինձ տուր:

Աշուղն ասում է.—հարսը գնաց իրենց տուն:

Սա թէ չէ, իմ հարսը տուր, թէ չէ՝ դէս թռչեմ, դէն թռչեմ, սաղիկդ առնեմ, գուրս թռչեմ:

Աշուղը սաղը տալիս է իրեն:

Սադն առնում է, ուսը գցում, թռչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճրաւը տալով՝ երգել:



Ծընգը, մընգը,

փշիկ աւի, լօշիկ առայ,

լօշիկ աւի, դառնիկ առայ,

դառնիկ տի, հարսիկ առայ,

հարսիկ տի, սաղիկ առայ,

սաղիկ առայ, աշուղ դառայ,

ծընգը, մընգը,

ծիւ, ծիւ:

Միտիկը ինչո՞ւ սաղը իրեն պահեց:

Հանելուկ.—Ալալա, բալալա, բեր խաղ արա, տար կախ արա:

Շուտ ասելուկ.—Եփեմք, էլի էն լաւ արլէն ձու:

էն լաւ արլէն էլի առ, քնո՞ր:



## 37. Երեք արշի հեքիասքր

1

Մի աղջիկ է լինում. էս աղջիկը մի անգամ դուրս է գալիս իրենց տնից ու գնում ընկնում անտառը. Անտառում մոլորում է. ճամփի է ման գալիս ճաժփա չի գտնում ու գալիս է դէմ առնում մի տնակի:

Ներս է մտնում: Դու մի ասի՛՛ էս տնակում երեք արջ են ապրում—հէրը, մէրը ու իրենց քոթոթը. էս ժամանակ զնացած են լինում անտառը ման գալու: Տնակը ունենում է երկու սենեակ՝ մինը սեզանատուն, միւսը ննջարան:

էս աղջիկը սեզանատունն է մտնում, տեսնում է սեզանի վրա դրած երեք աման ապուր: Առաջինն հօր ամանը, մեծ է լինում. երկրորդը, մօր ամանը, միջակ, երրորդը, քոթոթի ամանը, փոքրիկ: Ամեն մի ամանի մօտ էլ մի-մի գդալ է լինում դրած—մեծ, միջակ ու փոքր:



Աղջիկը առնում է մեծ գդալը, ուտում մեծ ամանից, անհամ է լինում:

Յետոյ վերցնում է միջակ գդալը, ուտում է միջակ ամանից, գուր չի գալի:

Յետոյ վերցնում է փոքր գդալը, ուտում է փոքր ամանից: Տեսնում է փոքր ամանի ապուրը համով է:

Ուզում է նստի՝ տեսնում է երեք աթոռ՝ մինը մեծ, միւսը միջակ, երրորդը փոքր: Բարձրանում է մեծ աթոռին՝ վեր է ընկնում: Նստում է միջակ աթոռին՝ տեսնում է անյարմար է: Նստում է փոքր աթոռին: քէֆը գալիս է, էնճանլան է լինում: Վերցնում է փոքր ամանը, դնում է ծնկներին ու սկսում է փոքր գդալով ուտել:

Ուտում է կշտանում ու սկսում է օրօրել աթոռի վրա: Աթոռը կոտրվում է, աղջիկը վեր է ընկնում:

Վեր է կենում, աթոռը ետ բարձրացնում ու մտնում միւս սենեակը:

Միւս սենեակում երեք մահճակալ է լինում, — մինը մեծ, միւսը միջակ, երրորդը փոքր:

Պառկում է մեծ մահճակալի վրա՝ տեսնում է շատ է լէն: Միջակի վրա է պառկում՝ տեսնում է շատ է բարձր: Փոքրի վրա պառկում, տեսնում է հէնց իրենն է որ կայ, ու քնում է:



Արջերը քաղցած գալիս են, որ ճաշեն: Հէրը մօտենում է իր ամանին, մօտիկ անում ու զարհուրելի գոռում:

— Էս ո՞վ է կերել իմ ամանից

Մէրը մօտիկ է անում իր ամանին ու փնթփնթում:

— Էս ո՞վ է կերել իմ ամանից:

Քոթոթն էլ, որ տեսնում է իր դատարկ ամանը, ծըմբբում:

— Էս ո՞վ է կերել իմ ապուր:

Հէրը նայում է իր աթոռին ու փնթփնթում:

— Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից  
ժած տւել

Մէրն է նայում իր աթոռին ու փնթփնթում:

— Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից ժած տւել:

Քոթոթը նայում է իր կոտրած աթոռին ու ծըմբբում է:

— Էս ո՞վ է նստել իմ արտին ու կոտրել:

Մանում են միւս սենեակը:

Հէրը նայում է իր մահճակալին ու զարհուրելի գոռում:

— Էս ո՞վ է պառկել իմ անկողնին ու  
տրորել

Մէրը նայում է իր մահճակալին ու փնթփնթում:

— Էս ո՞վ է պառկել իմ անկողնին ու տրորել:

Քոթոթն է նայում իր անկողնին ու ծըմբբում:

— Էս ո՞վ է պառկել իմ անկողնում:

Յանկարծ աղջկանը նկատում է ու էնպէս ճզզում, կարծես թէ մորթում էին իրեն:

էս ո՞վ է... գտել եմ... նրեւ... բռնեցի... վայ, վայ... բռնեցի.

Նւ ուզում է աղջկանը կծի: Աղջիկը վախից վեր է թռչում, աչքերը բաց անում, տեսնում է պառկած է իրենց տանը, իր ննջարանում: Ու էս բոլորը երազ է եղել:



### 38. Կոյր տղան

Ա՛խ, նա կոյր էր,  
փոքրիկ տղան,  
որը ու մհնակ,  
ու բակէ բակ  
տխուր կերգէր:



«Է՛, պարտններ, երնէկ նրան,  
ով տեսնում է ամհն օր  
կապոյտ կամար, արեւի լոյս  
ու երեսը անուշ մօրոյ:

Ա՛խ, նա կոյր էր,  
փոքրիկ տղան,  
ու բակէ բակ  
տխուր կերգէր:

## 39. Արտուտիկ



Արտուտիկ,  
նախշուն տոտիկ,  
իշնեն կալեր  
գողտիկ-մողտիկ,  
ընտրեն քարեր,  
ուտեն կուտիկ,  
կը ծրււլան  
կըլթիկ-կըլթիկ:

## 40. Գիծ քամին

Փոթորիկ պապը մի գիծ  
աղայ ունի, անունը Քամի:  
Իսկի չի կարողանում հան-  
գիստ նստի, միշտ մի ան-  
կարգութիւն է անում:

Մէկի գլխարկն է թռ-  
ցնում գլխից, միւսի հովանոցը  
շուռ տալիս ու շըշըլալով  
փախչում դնում:

Գնում յարձակում է տան-  
տիկնոջ փռած լըւացքի վրա:  
Հապիկը շարտում գցում հարե-



ւանի բակը, թաշկինակը հանում կտուրը ու ընկնում փողոցները:  
Փողոցների փողին հաւաքում է լցնում անցնողների  
աչքն ու բերանը, ինքը վը՛ղղ, թողնում կորչում է:

Ի՛նչ կորչում: Մին էլ անանքս ընկաւ բաց լուսամտից,  
փչեց, հանգցրեց ճրագը, քեզ թողեց մթնումն ու սուլելով,  
ծիծաղելով վառանի ծակից դուրս փախաւ:

Գիծ է, գիծ:

էլ ուրիշ ինչ գծութիւններ է անում քամին:

Հան ելուկ. — Ոտները կրակում, գլուխը երկնքում:

## 41. Քամին



—Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ...

Քամին է, քամին,  
տես անգգամին.  
բերան չունի՝ փըշում է,  
թևեր չունի՝ թռչում է,  
ձեռքեր չունի՝ բաշում է,  
իմ փոքրիկին քըշում է:

Կորի գու, քամի,  
անպիտան քամի.  
Մի վախի, ջանիկ,  
փէշըս պինդ բռնի,  
ես թող չեմ անի՝  
քամին բեղ տանի:

## 42. Վ ե ճ

—Կաթը ես եմ տալիս, — ասաւ կովը: — Դձեք  
ինչացու էք:

—Հողը ես եմ վարում, — ասաւ գոմէշը: — Դձեք  
ինչացու էք:

—Հեծւորին ես եմ թոցնում, — ասաւ ձին — Դձեք  
ինչացու էք:

—Տունն ու հօտը ես եմ պահում, — ասաւ շունը: — Դձեք  
ինչացու էք:

—Սըխարհը ես եմ ոտքի հանում, — ասաւ աքլորը: — Դձեք  
ինչացու էք: Մուգրուղս:

Ի՞նչ կատէին ոչխարը, էշը, կատուն, հաւը, եթէ այնտեղ լինէին:

Հան ել ու կ. — Բռնեմ բռնո՞ւմ մին, թողնեմ տնո՞ւմ մին:

## 43. Կիր

—Ասա, տեսնեմ, մեր գիւղում  
կովերն ինչպէս են կթում:


—Ահա այսպէս են կթում.  
Ժիծը խլում հորթուկից,  
հորթը կապում մօր ծնկից,  
կովկիթն իրենց զոգն առնում,  
կովի կողքին կըկըզում.

ՓԸՂՂ — ԲԸԺԺ,

ՓԸՂՂ — ԲԸԺԺ.

Ինչո՞ւ են զթելիս հորթը կովի ծնկից կապում.

## 44. Ոնց են հարում խնոցին



Թուր ծառից կապեցին,  
հաստ խնոցին կախեցին,  
երկու ծայրից բռնեցին,  
տարան, բերին, շարժեցին՝

Թըրըթը — չըրըթը.  
ահա այսպէս հարեցին.  
դեղին կարագ հանեցին.

Չեզ մօտ էլ այսպէս են խնոցի հարում.

## 45. Խնոցի

Հարը, հարի, խնոցի,  
մէջդ բարի, խնոցի,  
ունկըդ բարակ, խնոցի,  
մէջըդ կարագ, խնոցի,



## 46. Պոչատ աղւէս

1.

Լինում է չի լինում մի պառաւ. էս պառաւն իր էծը կը-  
թում է, կաթը վէր գնում, գնում է ցախ ու փէտ բերի, որ  
կրակ անի, կաթն եփի:

Մի աղւէս գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, ու-  
տում: Պառաւը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղւէ-  
սի պոչը կտրում:

2.



Պոչատ աղւէսը փախչում է,  
գնում է մի քարի վրայ կանգ-  
նում ու էսպէս խնդրում.



—Տափկ, տափկ, պոչս տուր, կըցեմ, կըցմըցեմ, գնամ  
ընկերներէս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, ռը-  
տեղ էիր:

Պառաւն ասում է.

—Դէ գնա իմ կաթը բեր:

3.

Աղւէսը գնում է կովի մօտ:

—Կովիկ, կովիկ, կաթ տուր ինձ, կաթը տանեմ պառա-  
ւին տամ, պառաւը պոչս տայ, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ըն-  
կերներէս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, ռըտեղ էիր:  
Կովն ասում է.

—Դէ գնա ինձ համար խնտ բեր:

4.

Աղւէսը գնում է արտի մօտ:

—Արտիկ, արտիկ, խնտ տուր ինձ, խտը տանեմ կովին  
տամ, խովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ,

պառաւը պոչըս տայ, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներէս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, Ռբտեղ էիր:

Դէ գնա ինձ համար ջուր բեր:

Աղւէսը գնում է աղբիւրի մօտ:

5.

—Աղբիւր, աղբիւր, ջուր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներէս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, Ռբտեղ էիր:

Աղբիւրն ասում է.

—Դէ գնա կուժ բեր:

6.

Աղւէսը գնում է աղջկայ մօտ:

—Աղջիկ, աղջիկ, կուժդ տուր, կուժը տանեմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներէս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, Ռբտեղ էիր:

—Դէ գնա ուլունք բեր ինձ համար:

7.

Աղւէսը գնում է չարչու մօտ:

—Չարչի, չարչի, ուլունք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տայ, կուժը տանեմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներէս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, Ռբտեղ էիր:

Չարչին ասում է.

—Դէ գնա ինձ համար ձու բեր:

Աղւէսը գնում է հաւի մօտ:

—Հաւիկ, հաւիկ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ շարչուն տամ, շարչին ինձ ուլունք տայ, ուլունքը տանեմ աջ-ջրկան տամ, աղջիկը ինձ կուժ տայ, կուժը տանեմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, սրտեղ էիր:

Հաւն ասում է.

—Դէ գնա ինձ համար կուտ բեր:

Աղւէսը գնում է կալւորի մօտ:

—Կալւոր, կալւոր, կուտ տուր ինձ, կուտը տանեմ հաւին տամ, հաւը ինձ ձու տայ, ձուն տանեմ շարչուն տամ, շարչին ինձ ուլունք տայ, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տայ, կուժը տանեմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձ ջուր տայ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տայ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տայ, կաթը տանեմ պառաւին տամ, պառաւը պոչըս տայ, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղւէս, սրտեղ էիր:

Կալւորի մեղքը զալիս է, մի բուն կուտ է տալիս Աղւէսը կուտը տանում է հաւին, հաւը ձու է տալի, ձուն տանում է շարչուն, շարչին ուլունք է տալի, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի, կուժը տանում է աղբիւրին, աղբիւրը ջուր է տալի, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի, խոտը տանում է կովին, կովը կաթ է տալի, կաթը տանում է տալի պառաւին, պառաւը պոչը տալիս է իրեն. կըցում է, կըցմըցում, վազում է գնում, իր ընկերներին հասնում:

## 47. ԿճՈՒՃՐ



Քեռին եկաւ մեր բակը՝  
լիք կճուճը շալակը,  
ուսի թուկը կարւեց,  
կճուճն ընկաւ կոտորւեց,  
Ի՞նչ կարող էր լինել կճուճի մէջ:

## 48. \*\*\*

Փոքրիկ Արտաշէսը շը-  
շըլացնելով գնում էր ձո-  
րով: Յանկարծ լսեց, որ մի  
ուրիշն էլ է շըլացնում: Հէնց  
իմացաւ՝ ընկերն է, կանգ-  
նեց, ձայն տւաւ:

— Վահան, դիւ ես:

— Ե՛ս...

— Ատա՛, մեր հորթը հըր  
գնաց, տեսա՛ր:

— Սա՛ր...

— Հանամբ ես անում  
ի՞նչ է:

— Ձէ...

— Վա՛յ, էտ հօ գէլը կուտի:

— Ուտի՛ր...

Արտաշէսը լալով վաղեց տուն. տեսաւ՝ հորթն էլ է տանը,  
Վահանն էլ:

Ի՞նչ ղնենք պատմութեան վերնագիրը:

Առաժնեք. 1) Քատարկ կարասը մեծ ձայն կը տայ:

2) Կարտսում ինչ ձայն տա՞ն էն կը լսես:



## 49. Ճանճերի գրոյցը



Իրիկունը ճանճերը հաւար-  
ւել էին առատաւորին ու գրոյց  
էին անում:

— Տըզզ, տըզզ, ինչլաւ կին  
է Սօֆիա մայրիկը, — ասում էր  
մի ճանճ և շաքարոտ ռաներն էր  
լիցում: — Ամբողջ օրը շարշա-  
ւում է մեղ համար: Թէյի

ժամանակ լիք շաքարումանը քերում է դնում մէջտեղը:  
Մեկ համար անուշ է պատրաստում, կանֆէա է հանում:  
բոլորը մեղ համար:

— Տըզզ, տըզզ, — մէջը մտաւ մի ուրիշը: — Այն օրն էլ երե-  
խաները մեր խաղողը ուտում էին, եկաւ խլեց, զբաւ պահա-  
րանի գլխին, որ մենք ուտենք:

— Իսկ այն արջի նման մաքղը, որ հայրիկ են ասում, —  
զարձեալ սկսեց տռաշինը, — ինչ անպիտան մարդ է: Մի տե-  
սակ բան է ծխում, ծխովտունը լցնում է, ներս մնալը չի լի-  
նում: Առջին էլ փոքրիկ աճանով մի բան է գրել, որ ինքը  
թանաք է ասում: Այն օրը  
փոքձեցի, համը տեսայ. թնւ,  
այնպէս դառն էր. քիչ մնաց՝  
մէջն էլ խեղզէի: Շատ ան-  
պիտան մարդ է, շատ:

— Օֆ, — հետաշեցին բոլոր  
ճանճերը միասին, — ափսոս չէ  
Սօֆիա մայրիկը:

Իսկ Սօֆիա մայրիկը ինչ էր պատմում ճանճերի մասին:

Առաժ. — Էշն ընկաւ դարու հորը,

ասա՛ւ՝ էս լաւ է քանց իմ ախոսը:



## 50. Ծառի զարմանքը



Այգու՛մ խաղողը հասել էր. Թռչունները մէջը քէֆ էին անում, մանաւանդ մի փոքրիկ ծիտ. նա ծնւել էր հէնց այդ այգում, մի սալօրէնու երկու ճիւղի տրանքում. Ամբողջ օրը թռչում էր ողկոյզից ողկոյզ, այստեղ մի հատիկ, այնտեղ մի հատիկ, անուշ էր անում ու երգում:

Ծի օր էլ տեսաւ՝ գիւղացիք քթոցներով թափւել են այգին. Հեռացաւ, թառ եղաւ մի ծառի ու խէթ-խէթ նայում էր. Տեսաւ՝ գիւղացիք դանակներով կտրտում են ողկոյզները, քթոցներն ածում, շալակում տանում. Վի՛նչ են անում էս մարդիկը իմ այգում, ո՛ւր են տանում իմ խաղողը, — զարմացած մտածում էր նա:

Ո՛ւր էին տանում խաղողը:

Խաղողի հետ միասին ուրիշ լինչ պտուղներ են հասնում այգում:

Ա. ո ա ծ. — Ծառը քանի պտուղ շատ ունենայ, գլուխը քաշ կը քցի:



# Յ Ե Ն Կ

## Ը Յ Բ Բ Ե Ն Ը Ր Ը Ն

I. ԱՌԱՋԻՆ 15 ՏԱՌԵՐԸ. ՄԻԱՅՆ  
ԶԵՌԱԳՐԻ ԵՒ ԱՌԱՆՑ ԳԼԽԱԳՐԻ

|                                   |   |
|-----------------------------------|---|
| ա, ա, բ, պ . . . . .              | 3 |
| կ, լ . . . . .                    | 4 |
| ա, մ . . . . .                    | 5 |
| ն, ո (=օ) . . . . .               | 6 |
| ւ (=վ), ու . . . . .              | 7 |
| ր, ւ . . . . .                    | 8 |
| հ (սկիզբը). է, հ (մէջը) . . . . . | 9 |

II. ԳԼԽԱԳՐԻ ԵՒ ՆՈՐ ՏԱՌԵՐ. ԱՄ-  
ԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ. ՄԻԱՅՆ  
ԶԵՌԱԳՐԻ

|                                    |    |
|------------------------------------|----|
| Ս, Ա, Մ—Մարիամ տառերը . . . . .    | 10 |
| Կ, Պ, Տ—Տիրանի մուկը . . . . .     | 11 |
| Հ — Մի նամակ . . . . .             | 12 |
| Պ — Մեղու . . . . .                | 13 |
| Վ — Մեր կովը . . . . .             | 14 |
| Ե, Ն, Լ, Ը—Սրամիտ Լեոնը . . . . .  | 15 |
| Ղ, Վ—Ընկերատէր Վարսենիկը . . . . . | 16 |
| Շ, — Տես ով է . . . . .            | 16 |
| Խ — Տրեխը . . . . .                | 17 |
| Ի, Խ — Խուլ Իսակը . . . . .        | 18 |
| Պ — Խոզը . . . . .                 | 19 |
| Հ — Կաշապակ . . . . .              | 20 |
| Ձ, Ձ—Ձիւ ու Համիչ . . . . .        | 20 |
| յ (մէջը)—Սալը . . . . .            | 21 |
| ց, Յ — Սղոց ու Կացին . . . . .     | 22 |
| օ, Օ — Օբօր . . . . .              | 23 |
| Ջ, Ջ — Ջաղաց . . . . .             | 23 |

III. ՏՊԱԳՐԻ ՈՒ ԶԵՌԱԳՐԻ ԵՌԱՅՏԻ-  
ՃԱՆԲԱՂԱԶԱՅՆՆԵՐ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ

|                                    |    |
|------------------------------------|----|
| Մանօթ տառերի տպագիրը 24—25         |    |
| ը (որ չի գրւում)—Տիկնիկը . . . . . | 26 |
| ո (սկիզբը)—Չորս ոչխար . . . . .    | 26 |
| դ—Տղան ու գոմէշը . . . . .         | 27 |
| դ — Դանակ և գդալ . . . . .         | 27 |
| բ—Սագերն ու բազը . . . . .         | 28 |
| Գ, Դ, Բ—Պարոն զլխարկը . . . . .    | 29 |
| ո, Բ—Վառարան . . . . .             | 30 |
| հ — Կոփն ու հաւը . . . . .         | 31 |
| Հ, Է—Հաւերը . . . . .              | 32 |
| ժ — Կուժը . . . . .                | 33 |
| թ — Մայրիկի թիթեռը . . . . .       | 34 |
| ծ — Այծը . . . . .                 | 34 |
| Ժ, Թ, Մ—Ժամկոչ ախպէր . . . . .     | 35 |
| Ք — Անքուն արեւը . . . . .         | 36 |
| փ, — Շնիկն ու փիղը . . . . .       | 37 |
| Ք, Փ—Լամպն ու արեւը . . . . .      | 38 |
| ճ, ճ—Անօթի ճուտերը . . . . .       | 39 |
| յ (վերջը)—Շուկայ . . . . .         | 39 |
| յ (սկիզբը)—Սիրուն յոպոպը . . . . . | 40 |
| ձ — Քաջ ձիւտը . . . . .            | 40 |
| Յ, Չ—Առանձինն Չկնորսը . . . . .    | 41 |
| Ֆ, Ֆ—Փըֆ փոֆ, Ֆէսը . . . . .       | 42 |
| իւ (=իւ)—Չաճբիւղ . . . . .         | 43 |
| ոյ (=ույ) Քոյր ու եղբայր . . . . . | 44 |
| եա, եօ—Դէպի լուսինը . . . . .      | 44 |
| Տառերի անունն ու կարգը 45—46       |    |

# ԸՆԹԵՐՑԱՐԱՆ


|                                             |    |                                     |
|---------------------------------------------|----|-------------------------------------|
| ✓ 1* Լուսացաւ, ժողով . . . . .              | 47 | 26* Գարնան ամիսները, Գ. - Լաթ. 74   |
| 2 Թռչնիկներ, Ղ. Աղայեանի . . . . .          | 47 | 27 Արագիլի դարձը . . . . .          |
| ✓ 3* Առաջին ձիւնը . . . . .                 | 48 | ✓ 28* Կռուկներ, ժողով . . . . .     |
| 4 Ծաի գուլպաները . . . . .                  | 49 | 29* Հուռին . . . . .                |
| 5* Աքաղաղ, Ղ. Աղայեանի . . . . .            | 49 | 30 Քեռին մեռել է . . . . .          |
| ✓ 6 Ուլիկը . . . . .                        | 50 | 31 Ժամացոյց . . . . .               |
| ✓ 7* Շունը . . . . .                        | 52 | 32 Բնի մէջ . . . . .                |
| 8 Ուժովը . . . . .                          | 54 | 33* Մեղու, Գ. Բ. կրճատ. . . . .     |
| 9* Կատու Գ. - Բաթիպա . . . . .              | 54 | 34 Ո՛վ է մեղաւորը . . . . .         |
| 10 Խելօք գլուխ, փ. Աղայեանի . . . . .       | 54 | ✓ 35* Ծիախիկ օրօրքը . . . . .       |
| 11 Զեռքի մատները, ժողով . . . . .           | 55 | ✓ 36 Միտը . . . . .                 |
| 12 Մկան տունը . . . . .                     | 55 | ✓ 37 Նրեք արջի հեքեաթը . . . . .    |
| 13 Երկինքը փուլ է գալիս . . . . .           | 56 | ✓ 38* Կոյր տղան . . . . .           |
| 14* Բաղիկը . . . . .                        | 59 | ✓ 39* Արտուտիկ . . . . .            |
| 15 Արև ու լուսին . . . . .                  | 59 | 40 Դիժ քամին . . . . .              |
| 16* Իրիկուն . . . . .                       | 62 | ✓ 41* Քամին . . . . .               |
| 17 Պետիկի վերջակէտը . . . . .               | 63 | 42 Վէճ . . . . .                    |
| ✓ 18* Էս էն է . . . . .                     | 64 | 43* Կիթ, Ա. Արարատեանից . . . . .   |
| 19 Հէքեաթասէր երեխէք, Ղ. Աղայեանի . . . . . | 67 | 44* Մնչ են հարում, Ա. Արար. . . . . |
| 20 Շունն ու նապաստակը . . . . .             | 70 | ✓ 45* Մոռցի, ժողով . . . . .        |
| 21 Ծոյլ աղջիկը, ժողով . . . . .             | 70 | 46 Պոչատ աղւէս . . . . .            |
| 22* Ծոյլ աղան, ժողով . . . . .              | 70 | 47* Կնուճը, ժողով . . . . .         |
| 23* Առաւօտ, Ղ. Աղայեանի . . . . .           | 70 | 48 Արձապանք . . . . .               |
| 24 Զաւ հաւի պատուութիւնը . . . . .          | 71 | 49 Ծանձերի զրոյցը . . . . .         |
| 25* Փիտիկի դանդաղը . . . . .                | 73 | 50 Ծաի զարմանքը . . . . .           |

Մեր հեղինակութիւնները, մեր մշակած ժողովրդական նիւթերը, մեր թարգմանութիւններն ու փոփոխութիւնները ստորագրուած թիւն չեն կրում:

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒՆՈՒՄԸ

|                     |    |                     |    |                      |    |
|---------------------|----|---------------------|----|----------------------|----|
| 1. Զանգ . . . . .   | 25 | 5. Գիշեր . . . . .  | 63 | 9. Կամուրջ . . . . . | 74 |
| 2. Սուեր . . . . .  | 50 | 6. Շողք . . . . .   | 61 | 10. Սաղ . . . . .    | 76 |
| 3. Մատանի . . . . . | 55 | 7. Միւր . . . . .   | 61 | 11. Ծուխ . . . . .   | 83 |
| 4. Սարդեր . . . . . | 63 | 8 Անկողին . . . . . | 70 | 12. Զրաղ . . . . .   | 85 |






Se. 804.

491.99-86

5-61

Uty  
Opizwly





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՐԱՆԻՑ



FL0054956

ЦЕНА

III  
860